

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՒՌՈՒՄՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....4

Ներածություն.....5

Գլուխ 1. Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում.....6

1.1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2009-2012 թթ. ծրագրի արդյունքները.....6

1.2. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները.....10

1.3. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նպատակները, հիմնական ուղղությունները և խնդիրները.....11

1.4. Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար արժեքներն ու սկզբունքները.....12

Գլուխ 2. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներ.....15

2.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցներ.....15

2.1.1. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում.....15

2.1.2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում.....17

2.1.3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում.....18

2.1.4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը.....19

2.2. Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանում և արդյունավետ քննություն.....20

2.3. Հանրային վստահության բարձրացումը.....22

Գլուխ 3. Հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտներ.....23

3.1. Հակակոռուպցիոն ռազմավարությունը կրթության ոլորտում.....23

3.1.1. Իրավիճակի նկարագրություն.....23

3.1.2. Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները.....26

3.1.3. Կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները.....28

3.2. Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում.....	29
3.2.1. Իրավիճակի նկարագրություն.....	29
3.2.2. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները.....	31
3.3. Հակակոռուպցիոն ռազմավարությունը ոստիկանության ոլորտում՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով.....	32
3.3.1. Իրավիճակի նկարագրություն.....	32
3.3.2. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտում առկա հիմնախնդիրները.....	34
3.3.3. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները.....	38
3.4. Հակակոռուպցիոն ռազմավարությունը առողջապահության ոլորտում.....	40
3.4.1. Իրավիճակի նկարագրություն.....	40
3.4.2. Առողջապահության ոլորտում առկա հիմնախնդիրները.....	41
3.4.3. Առողջապահության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները.....	49

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ (CoE)
ԵՄ	Եվրոպայի միություն
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն (ENP)
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԷԱԳ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խումբ (EAG)
ԹԻ	Թրանսփարենսի ինթերնեշնլ (TI)
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԴՊՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO)
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿՀՀ	Կոռուպցիայի հսկելիության համաթիվ
ԿՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀԲԻ	Համաշխարհային բանկի ինստիտուտ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌԻՄԾ	Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր
ՀՀ ՖՆ	ՀՀ Ֆինանսների նախարարություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԿԴԿ	Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (UNCAC)
ՀՌԻՄՀ	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով
ՏԶԿ/ԹԻ	Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի ինթերնեշնլ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)
ՔԾԽ	Քաղաքացիական ծառայության խորհուրդ
ՔԿ համաթիվ	Քաղաքական կայունության համաթիվ
ՔՕ	Քրեական օրենսգիրք

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Վերջին տասնհինգ տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել և հռչակել է իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը:
2. Դեռևս նախորդ տասնամյակի սկզբներին ՀՀ կառավարությունն ամբողջականացրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները: Մասնավորապես, 2003թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության թիվ 1522-Ն, որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007թթ. ծրագիրը, որը սահմանում էր կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: Սույն ռազմավարությունը միտված էր կոռուպցիայի հաղթահարմանը, այն ծնող և տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, երկրում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը:
3. ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական իրականացման կարևորագույն նախադրյալներից էր ինստիտուցիոնալ կառույցի ձևավորումը: 2004թ. հունիսի 1-ին Հանրապետության Նախագահի հրամանագրով ստեղծվել և մինչ օրս գործում է ԿՊԽ-ն, որն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ վարչապետը: Խորհրդին առընթեր ստեղծվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով՝ ՀՀ նախագահի օգնականի ղեկավարությամբ:
4. 2009թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության թիվ 1272-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը, որով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք էր սահմանվել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն էին՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի տնտեսական մրցունակության բարձրացումը:
5. ՀՀ ԱԺ-ի 2014 թվականի մայիսի 22-ի «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-115-Ն որոշմամբ ևս մեկ անգամ ՀՀ կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը սահմանվեց կոռուպցիայի դեմ պայքարի: Մասնավորապես, սահմանվեց, որ ՀՀ կառավարությունը հակակոռուպցիոն քաղաքականությունը կիրականացնի կոռուպցիայի դեմ պայքարի նոր վերափմաստավորված տեսլականի հիման վրա: Սույն տեսլականը նախևառաջ միտված է հանրային կառավարման համակարգում բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյայի տեսակի ձևավորման միջոցով կոռուպցիայի մակարդակի ու տարածվածության նվազեցմանը, հանրային վստահության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման ավելի արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2009-2012 թթ. ծրագրի արդյունքները

6. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն նոր քաղաքականության առաջնայնություններն ու խնդիրները նախանշելու, ՀՀ հակակոռուպցիոն մարմինների նոր ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու նպատակահարմարությունը որոշելու, հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում Կառավարության ապագա քայլերը որոշելու նպատակներով կարևորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրն ուղղված էր կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատարելագործմանը՝ կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությունը և հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի դերը:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն են՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի տնտեսական մրցակցության բարձրացումը: Նշված նպատակի և հիմնական արդյունքների կենսագործման համար փաստաթղթում նախատեսվել են շուրջ 124 ռազմավարական դրույթներ, որոնք բաժանվում են միջոցառումների՝ առանձնացված 2009, 2010, 2011 և 2012 թվականների իրականացման համար:

9. 2000 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության, ինչպես նաև տարեկան գործունեության միջոցառումների ծրագրերում շարունակաբար ամրագրվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղենիշները:

10. Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի ուշագրավ արդյունքներն են՝

- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով ապահովվել է քաղաքական ազդեցություն

ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսական դիտարկումների և ֆինանսական հաստատությունների համար: Բարձրացել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի բացահայտման արդյունավետությունը:

- Հարկային ոլորտում հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել են հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վերհանելու և տնտեսական հանցագործությունների ու կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր: Ընդլայնվել է էլեկտրոնային հարկային ծառայությունների շրջանակը: Ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային եղանակով ընդունելու պահանջը: Ներդրվել է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումներն առաքելու ավտոմատացված համակարգը: Գործարկվել է ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության ավտոմատացված համակարգը: Ներդրվել և ամբողջությամբ գործում են հարկային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը, հարկ վճարողների սպասարկման կենտրոններն ու հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնը:

- Մաքսային ոլորտում բարձրացել է մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը: Ներդրվել են մաքսային ծառայության կատարողականի գնահատման համակարգ, դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մաքսային ծառայության պաշտոնական կայքի և թեժ գծի հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև արդյունավետ հաղորդակցություն:

- Կրթության ոլորտում ներդրվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների միասնական համակարգը, հեշտացվել է դպրոցից՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների անցման գործընթացը: Կառավարման թափանցիկության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել են իրենց տարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի» համաձայն: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշները: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկության ու անկախության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ:

- Առողջապահության ոլորտում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայվել և փոփոխվել է հիվանդանոցային

ճառայությունների փաթեթն, ինչն արտացոլված է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին օրենքում:

- Դատական համակարգում, դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկության և վերահսկելիության ապահովման ուղղությամբ 2012թ.-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է դատավորների շահերի բախման ինստիտուտը:

- Իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում ներդրվել է էլեկտրոնային ռեգիստրի գաղափարը՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքում կատարելով փոփոխություններ: Օրենքի ընդունումից հետո պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը ստացվում են միայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով: Կրճատվել են իրավաբանական անձանց պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման և լուծարման գրանցման ժամկետները:

- Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունների բարձրացման ուղղությամբ ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ: Բարելավվել են դատական ակտերի հարկադիր կատարման նկատմամբ ՀՀ Արդարդատության նախարարության շրջանակում իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Վերանայվել են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդներն ու ընթացակարգերը: Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ապահովման ընթացակարգ:

- Ոստիկանության ոլորտում նշանակալի արդյունքներ են արձանագրվել՝ ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչային ծրագիր: Կատարելագործվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: Կանոնակարգվել է բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս: Բնակչության պետական ռեգիստրի բազայում ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշների համակարգը: Կատարելագործվել է ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը: Պարզեցվել է վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու ընթացակարգը: Ներդրվել է սեփականատիրոջ դիմումի հիման վրա բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին կարճ ժամանակում հաշվառումից հանելու պարզեցված ընթացակարգ:

- Հանրային ծառայության ոլորտում 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգում է հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Կանոնակարգվել է ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկան, շահերի հայտարարագրման մեխանիզմներն ու շահերի բախման

դեպքերի վարույթի իրականացման կարգերը: Ձևավորվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովը և գործարկվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգը:

- Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունեն նաև Ծրագրի գործողության ընթացքում ընդունված հակակոռուպցիոն իրավական ակտերն, ինչպիսիք են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 22.12.2010թ.-ին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.05.2011թ.-ին, ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ 26.05.2011թ.-ին (ընտրարշավների ֆինանսավորման մեջ կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների մասով):

11. Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ, որում քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման և հետապնդման մասնագիտացված մարմինների կողմից իրականացվող գործառույթներից:

12. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում նախանշված նպատակներն ամբողջությամբ չեն իրագործվել, և Հայաստանի Հանրապետությունը շարունակում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին: Հասարակության մեջ կոռուպցիայի մակարդակի ամենացածր ընկալումը տեղական ինքնակառավարման մարմիններում է և դպրոցներում: Կոռուպցիայի ամենաբարձր մակարդակն ընկալվում է ոստիկանությունում, դատաիրավական համակարգում, հարկային և մաքսային մարմիններում, պետավտոտեսչությունում և բուհերում:

13. Ուշագրավ է նշել, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի մոնիտորինգի և գնահատման համակարգը խարսխված է միջազգայնորեն ընդունված կոռուպցիայի գնահատման ցուցանիշների համակարգի և դրանց մեթոդաբանության վրա:

14. 2009-2012 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագիրն ամրագրել էր գերատեսչական (ոլորտային) հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման քաղաքականություն, որը, սակայն, ամբողջությամբ չի ապահովվել պետական մարմինների կողմից: Միայն առանձին դեպքերում են ընդունվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ոլորտային ծրագրեր կամ այլ փաստաթղթեր, մասնավորապես, «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը», «Առողջապահության համակարգի բարեփոխման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակացույց՝ 2010-2012թթ. համար»: Ծրագրով նախատեսված մի շարք հակակոռուպցիոն օրենքների ընդունումը չի ապահովվել: Օրինակ՝ «Ծրագրային բյուջետավորման մասին», «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքները չեն ընդունվել:

15. 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների լրիվ կամ մասնակի չկատարման պատճառները պայմանավորված են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի թերի պլանավորմամբ՝ միջոցառումների, արդյունքի իրականացման

պատասխանատու մարմնի ոչ ճիշտ որոշման, միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքի իրականացման ոչ հիմնավոր վերջնաժամկետներ սահմանելու պատճառով: Միջոցառումներն անհրաժեշտ չափով համալիր և ամբողջական չէին: Ծրագիրը մշակելիս կոռուպցիոն հիմնախնդիրները, կոռուպցիայի պատճառները, դրսևորման ձևերը թերի էին բացահայտվել:

16. Ռազմավարության խնդիրներից մեկը նաև անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցների լիարժեք ապահովվածության բացակայության պարագայում ներառված ոլորտների չափազանց լայն և ոչ թիրախավորված լինելն էր:

17. Հակակոռուպցիոն ռազմավարություն մշակելիս հիմնախնդիր է կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերումն ու դրանց հաղթահարման ուղիների փնտրտույքը, միջոցառումները պետք է գնահատված լինեին նախքան միջոցառումների ծրագրի մշակումը, ինչը որ չէր արվել հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը մշակելիս: Ծրագրի կենսագործման ընթացքում չի ապահովվել նոր կոռուպցիոն ռիսկերի և պատճառների ուսումնասիրության հիման վրա ծրագրում նախանշված միջոցառումների փոփոխումը կամ համալրումը: Ծրագրով կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար մի շարք ոլորտներում նախատեսվել էին հիմնականում օրենսդրական փոփոխություններ և/կամ վերապատրաստումներ ենթադրող միջոցառումներ, որոնք չէին կարող էական ազդեցություն ունենալ կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վրա:

1.2. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

18. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվել են:

19. 2004թ. հունվարին Հայաստանն անդամակցել է ԿԴՊՊԽ-ին, իսկ 2004 թ. հունիսին և դեկտեմբերին, ստորագրել և վավերացրել է Եվրախորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով:

20. ԵՀԲ շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006 թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի

բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները միաժամանակ ներառված են նաև ՄԱԿ-ի, ԵԽ-ի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» կոնվենցիաներում, ԿԴՊՊԽ-ի ու ՏՀԶԿ-ի առաջարկություններում:

21. 2005 թ. ՀՀ-ը ստորագրել է Միավորված ազգերի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (ՄԱԿԿԴԿ), որը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, 2006 թ.: Լինելով ՄԱԿԿԴԿ անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը ենթարկվել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման մոնիտորինգին:

22. 2005 թ. ստորագրված ՆԱՏՕ-ի հետ ՀՀ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով, ՀՀ կառավարությունը պարտավորվել է ակտիվորեն մասնակցել ԿԴՊՊԽ-ի գործունեությանն ու իրականացնել ԿԴՊՊԽ-ի առաջարկությունները, իրականացնել ՀՌԻՄԾ-ն, ներդնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի կանխարգելման և հետապնդման հստակ և թափանցիկ հաշվետվողականության մեխանիզմ, բարելավել իրազեկումը կոռուպցիայի վերաբերյալ՝ պետական պաշտոնյաների ուսուցման և վերապատրաստման միջոցով:

23. Հայաստանը միացել է Բաց Կառավարման համագործակցությանը 2012 թ. ապրիլի 17-ին: Բաց կառավարման համագործակցությունը ստեղծվել է 2011 թվականի սեպտեմբերի 20-ին՝ 8 հիմնադիր երկրների (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) կողմից՝ թափանցիկ, հաշվետու և արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով: Հայաստանը, միանալով այս նախաձեռնությանը, ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց շարքում և կոռուպցիայի դեմ պայքարը:

1.3.ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նպատակները, հիմնական ուղղությունները և խնդիրները

24. Հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակը Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելն է, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով:

25. Ռազմավարությունն օգնելու է պետական կառավարման կառույցներին փոխելու իրենց ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մշակույթն ու հետևանքների առումով որդեգրել արդյունքին ուղղված մոտեցում: Ռազմավարությունը պահանջում է ակտիվ մասնակցություն բոլոր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության կողմից:

26. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյաների միջոցով կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը,

հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական խնդիրը հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը, կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանմանը և կոռուպցիոն վարքագծի դրսևորումների արդյունավետ քննությանը և հանրային վստահության բարձրացմանն ուղղված միջոցների համալիր կիրառումն է: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը տվյալ խնդիրն իրականացնելու է թիրախային չորս ոլորտներում՝ առողջապահության, կրթության, պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին մատուցված ծառայությունների մատուցման:

1.4. Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար արժեքներն ու սկզբունքները

27. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման նոր տեսլականը հիմնված է «փոփոխության տեսության» վրա: Այն ենթադրում է կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացի վերափոխման արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորությունները, որոնց իրավունքները խախտվել են և վերափոխում:

28. Հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնարար արժեքները կենսագործելու նախապայմանի վրա.

- **Իրավունքի և օրենքի գերակայություն և Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգում.** բոլոր պետական մարմինները պետք է հետևեն օրենքների պահանջներին: Այն քաղաքացիները, որոնց իրավունքները խախտվել են արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորություն պետք է ունենան:

- **Քաղաքական կամք.** պետական իշխանության բոլոր ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, լիովին գիտակցում են կոռուպցիայից զերծ հասարակություն ունենալու կարևորությունը և արդյունավետ համագործակցում են ռազմավարության իրականացումն ապահովելու համար:

- **Հանրային շահի առաջնայնություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից: Անթույլատրելի է լիազորությունների օգտագործումն իրենց, իրենց ընտանիքների կամ մտերիմների համար չարդարացված նյութական կամ ոչ նյութական օգուտներ կամ առավելություններ ստանալու համար:

- **Բարեխղճություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչները պարտավոր են հրապարակել իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձնական շահ, ինչպես նաև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար.

● **Թափանցիկություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Հանրային կառավարման ժամանակակից և արդյունավետ համակարգի ձևավորման համար ռազմավարության իրականացումը հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

● **Իրավունքի գերակայություն.** բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, ապահովված է իշխանությունների լիարժեք բաժանումը, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումը:

● **Պատասխանատվություն.** հանրային իշխանության մարմինները պատասխանատու են Ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

● **Կոռուպցիոն ռիսկերի գնահատում և կառավարում.** հանրային յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունակ լինի իր կողմից իրականացվող կառավարման գործընթացում կանխատեսել կոռուպցիոն պոտենցիալ ռիսկերը և համարժեքորեն նվազեցնել դրանք.

● **Ինքնագնահատում.** պետական կառավարման պատասխանատու մարմինների կողմից կոռուպցիոն ռիսկերը պետք է պարբերաբար գնահատվեն՝ այս ռազմավարության և դրա համապատասխան գործողությունների ծրագրի իրականացման նպատակով:

● **Հակակոռուպցիոն ընթացակարգերի մշակման և իրացման համաչափություն.** հանրային ինստիտուտները պետք է մշակեն, ներդնեն և իրականացնեն այնպիսի հուսալի ընթացակարգեր, որոնք համաչափ կլինեն ինստիտուցիոնալ ռիսկերին և տվյալ ինստիտուտի պաշտպանվածության աստիճանին (խոցելիությանը), ինչպես նաև կհամապատասխանեն այս կամ այն ինստիտուտի ռեսուրսներին և կազմակերպական առանձնահատկություններին:

● **Քաղաքական բարձրագույն մակարդակում հաշվետվողականություն.** հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը պահանջում է կառավարման բարձրագույն մակարդակում հանրային բոլոր ինստիտուտներին կոռուպցիայի բացարձակ անհանդուրժողականության հստակ ազդակների հասցեագրում: Կառավարման յուրաքանչյուր օղակ պետք է նախաձեռնի, ղեկավարի և վերահսկի կոռուպցիայի հակազդման միջոցառումներ՝ գիտակցելով, որ կոռուպցիան հակասում է բարեխղճության, թափանցիկության հիմնարար արժեքներին:

● **Կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում.** առաջնահերթ և պարտադիր է ապահովել կոռուպցիոն իրավախախտումներ ծնող և դրանց նպաստող նախադրյալների վաղ բացահայտումը և ժամանակին չեզոքացումը: Ինչպես հանրային ինստիտուտները պետք է միջոցներ ձեռնարկեն կոռուպցիայի դեմ պայքարում վստահելի գործընկերներ գտնելու և նրանց հետ համագործակցելու հարցում: Գործընկերային կամ այլ համաձայնություններ կնքելիս յուրաքանչյուր

ինստիտուտ պետք է հավաստիանա, որ հակառակ կողմն ունի սույն և մյուս սկզբունքներին համապատասխանող քաղաքականություն և ընթացակարգեր:

● **Համագործակցություն և համաձայնեցում.** կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին ներգրավված ինստիտուտները պետք է սերտորեն համագործակցեն՝ ապահովելով նպատակների և դրանց նվաճմանն ուղղված միջոցառումների միասնական սահմանումը և համատեղ իրականացումը:

● **Հանրային-մասնավորգործընկերություն.** անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի դեմ ձեռնարկվող կանխարգելիչ կոնկրետ միջոցառումների իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հանրության ներգրավվածությունը:

1.5. ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ

29. Հայաստանում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված կառավարման համակարգ, որտեղ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման մասնագիտացված մարմիններից:

30. ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականությունը կենսագործվում է կանխարգելիչ ինստիտուցիոնալ մոդելի շրջանակներում՝ հետևյալ կառուցվածքով:

31. Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ): Խորհուրդը ղեկավարում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկվում են՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, ՀՀ ֆինանսների նախարարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ գլխավոր դատախազը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահը, խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների մեկական ներկայացուցիչ, Հանրային խորհրդի նախագահը, համայնքների միության մեկ և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ:

32. Խորհրդին կից գործում է բարձրորակ մասնագետներով համալրված մշտապես գործող հանձնախումբ (այսուհետ՝ Հանձնախումբ): Հանձնախումբը կազմված է անկախ փորձագետներից, որոնք ներգրավվում են մրցությամբ հիմունքներով: Փորձագետների ընտրությունը և նրանց ազատումն իրականացվում է է Խորհրդի կողմից: Հանձնախումբն իր գործառույթներն իրականացնելիս անկախ է և հաշվետու է միայն Խորհրդին: Հանձնախմբի գործունեության նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է Կառավարության աշխատակազմը, աշխատակազմում ստեղծված հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի միջոցով:

33. Կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինն իրականացնելու է քարտուղարության գործառույթներ:

34. Առանձին ոլորտներում հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնում են պատասխանատու մարմինները (նախարարություններ, կառավարությանն առընթեր պետական մարմիններ): Պատասխանատու

մարմինները ապահովում են ոլորտային ծրագրերի մշակումն ու լիարժեք իրականացումը:

35. ՀՀ-ում գործում են բազմաթիվ պետական մարմիններ, որոնք իրենց գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս նպաստում են կոռուպցիայի կանխարգելմանը: Այդպիսի մարմիններ են՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովը, ՀՀ Վերահսկիչ պալատը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, ՔԾԽ-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և այլն: Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում առանցքային դեր ունեն բազմաթիվ պետական մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմինները:

36. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունը իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը, ներկայումս արդեն նաև ՀՀ քննչական կոմիտեն: Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դատարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է ՀՀ դատախազությունը:

37. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը համակարգված հանդիպումների միջոցով համագործակցության հարթակ է ձևավորում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների ներկայացուցիչների հետ: Համակարգված հանդիպումների ժամանակ քննարկումներ են տեղի ունենում իրականացված միջոցառումների, խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև պատշաճ հաղորդակցություն և արդյունավետ համագործակցություն: Քննարկումների արդյունքներն ամփոփվում են կառավարության կողմից սահմանված կարգով և ձևաչափով:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

2.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցներ

2.1.1. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում

38. Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևորվում է օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը: Այս առումով, առաջնային նախապայման է հանդիսանում **հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց օրինավոր և բարեխիղճ վարքագիծն ապահովող ինստիտուցիոնալ**

համակարգի ձևավորումը: Վերջինիս իրականացմանն ուղղված միջոցառումներն ընդգրկում են՝

- ԵՄ և ՏՀՀԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում, ճյուղային օրենքներով էթիկայի սկզբունքների և վարքագծի կանոնների սահմանելը.

- հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներ (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) ձևավորելը.

- բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքներ տրամադրելը և ռեսուրսներով համալրելը.

- վարքագծի կանոնների պահանջների իրական կատարումը, ներառյալ՝ այդ պահանջներին չենթարկվելու համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը.

- էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների թափանցիկ և հաշվետու գործունեության պահանջների օրենսդրորեն սահմանումը՝ կանոնակարգելով հանրային հաշվետվողականության մեխանիզմները:

39. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման կարևոր նախապայմաններից մեկը **շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգերի ձևավորումը:** Վերոնշյալն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները.

- հանրային ծառայողի և պաշտոնատար անձի շահերի բախման հասկացության և իրավիճակների սահմանումը, շահերի հայտարարագրման մեխանիզմների սահմանումն ու կատարելագործումը.

- հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման, ինչպես նաև դրանց չեզոքացման գործառույթների վերապահումը՝ էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին.

- շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը:

40. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման հաջորդ կարևոր նախադրյալը **հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավում:** Վերջինիս իրականացմանն ուղղված միջոցառումներն ընդգրկում են՝

- ակտիվների ու շահերի հայտարարագրման գործընթացի վերանայումն ու օպտիմալացումն՝ ընդլայնելով հայտարարագրման ենթակա տվյալների ցանկը և հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը, որոշակիացնելով փոխկապակցված անձանց և ընտանիքի կազմին վերաբերող տվյալների շրջանակը, հստակեցնելով հայտարարագրման կարգը և ժամկետները.

- հայտարարագրման գործընթացի կանոնների կատարման մշակումն ու ներդնումը՝ ներառյալ այդ կանոնների պահանջները չկատարելու համար իրավական ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի.

- հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացումը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

2.1.2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում

41. Հանրային ծառայության միասնականությունն ու ամբողջականությունը, պետական մարմինների գործառույթների հստակ տարանջատումը, կառուցվածքային և գործառույթային արդյունավետության ապահովումը հանդիսանում են կոռուպցիայի կանխարգելման առանցքային: Այս առումով, **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է լինելու հանրային կառավարման մարմինների կառուցվածքային և գործառնական բարեփոխումների ապահովմանը:** Վերոնշյալն իրականացնելուն ուղղված միջոցառումներն ընդգրկում են՝

- հանրային կառավարման մարմինների կառուցվածքային արդյունավետությունը գնահատելը, գործող ինստիտուտների գործառույթների վերանայումն ապահովելը և դրանց լիարժեք իրագործման համար լիազորությունների ամբողջացումը.

- միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտ ներդնելը՝ տարանջատելով «հանրային ծառայող» և «հանրային պաշտոնյա» հասկացությունները.

- ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավական և կառուցակարգային երաշխիքներն ամրապնդելը.

- հանրային ծառայությունը պրոֆեսիոնալ մասնագետներով համալրելը.

- հանրային քաղաքականության պլանավորման և իրականացման կարողությունները զարգացնելը, հանրային կառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման կարողությունների զարգացումն ու ռեսուրսներով ապահովելը.

- հանրային ծառայության իրավական կարգավորումները կատարելագործելը և վարչարարությունը պարզեցնելը:

42. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է **ռեսուրսների արդյունավետ կառավարման ապահովումը:** Այս նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները.

- բյուջետային միջոցների կառավարման արդյունավետությունը բարձրացնելը.

- ներքին աուդիտի համակարգը կատարելագործելն, այդ թվում՝ համապատասխան մասնագետների որակավորումների բարձրացման միջոցով.

- գնումների կազմակերպման և դրանց արդյունքների բողոքարկման ընթացակարգերի բարելավումը:

43. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման նպատակով կարևորվում է նաև **հանրային կառավարման համակարգի շարունակաբար արդիականացումը**: Այս նպատակով իրականացվելիք միջոցառումներն են.

- էլեկտրոնային կառավարման համակարգերը կատարելագործելը.
- կառավարման համակարգի արդիականացման միջազգային լավագույն փորձի շարունակական ուսումնասիրությունն ու կիրառումը:

44. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորման նախադրյալներից է նաև **հանրային ծառայությունների որակի բարելավումը**: Վերջինիս իրականացմանն ուղղված միջոցառումներն ընդգրկելու են՝

- ողջամիտ ժամկետներում ծառայությունների պատշաճ մատուցումն իրականացնելը,
- ծառայությունների որակի գնահատման օբյեկտիվ և կանխատեսելի չափորոշիչներ սահմանելը,
- ծառայությունների որակի շարունակական գնահատումը, ծառայությունների արդար և հասցեական բաշխման սկզբունքներն ապահովելը, շահառուներին հանրային ծառայությունների բարելավման գործընթացին ներգրավելը:

2.1.3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում

45. Կոռուպցիայի կանխարգելման համար կարևոր նախապայման է հանդիսանում թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորումը: Այդ ճանապարհին կարևորվում է **բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովումը**:

46. Բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումներն ընդգրկելու են՝

- տեղեկատվության տրամադրման ընթացակարգերն ու ժամկետները հստակեցնելը, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցներ սահմանելը.
- հանրությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման նոր գործիքներ ներդնելը:

47. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է նաև **բարձրացնել իշխանության մարմինների և հանրային ինստիտուտների գործունեության թափանցիկությունը**: Այս առումով միջոցառումներն ընդգրկելու են՝

- պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման՝ հանրության համար հասկանալի և վստահելի համակարգ գործարկելը.

- իրականացված աշխատանքների, գործունեության արդյունքների, այդ թվում ֆինանսական գործառնությունների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների հրապարակումն ապահովելը.

- քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշներ սահմանելը.

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող երևույթների և խնդիրների վերաբերյալ հանրությանն ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն տրամադրող կառուցակարգերի մշակումը:

48. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորման կարևոր նախադրյալներից է նաև **ֆինանսական թափանցիկության բարձրացումը:**

49. **Այս նպատակող իրականացվելու են հետևյալ միջոցառումները.**

- պետական բյուջեի մշտադիտարկման կառուցակարգերը կատարելագործելը.

- անկախ աուդիտի համակարգը զարգացնելը.

- աուդիտորական եզրակացությունների հրապարակայնությունը մեծացնելը:

2.1.4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը

50. Կոռուպցիայի դեմ պայքարի գործում էականորեն կարևորվում է քաղաքացիական հասարակության ներգրավումը հանրային կառավարման համակարգի գործունեությանը: Մասնակցային կառավարման համակարգի ձևավորման համար նախևառաջ կարևորվում է **կայուն կապի ձևավորման ապահովումը, շարունակական երկխոսությունը՝ քաղաքացիական հասարակության և իշխանության մարմինների ու հանրային ինստիտուտների միջև:** Սույն խնդիրն իրականացնելուն ուղղված միջոցառումներն ընդգրկվելու են՝

- ընթացող բարեփոխումների ու ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության, գործարար հանրության, քաղաքացիների, ՁԼՄ իրազեկվածության մակարդակը բարձրացնելը.

- երկխոսության նոր և կայուն հարթակների ձևավորմանը նպաստելը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաների, ֆորմալ ցանցերի տեսքով.

- հանրային լուսման և քննարկումների կազմակերպման և անցկացման կանոնակարգված ձևաչափեր ներդնելը:

51. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորման համար կարևոր դեր է խաղում **որոշումների կայացման, իրականացման և վերահսկման գործընթացում հանրային մասնակցության ապահովումը:** Այս նպատակով իրականացվող միջոցառումներն ընդգրկվելու են՝

- էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքներ ներդնելը, այդ թվում՝ էլեկտրոնային սոցիոլոգիական հարցումների, էլեկտրոնային քվեարկությունների, նոր առաջարկությունների հավաքման և այլ մեթոդների կիրառմամբ.

- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հանրային ինստիտուտների առանձին լիազորություններ պատվիրակելը կամ դրանց համատեղ իրականացման հնարավորություն տալը քննարկելը.

- պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելը՝ յուրաքանչյուր բնագավառում մշտադիտարկման կայուն և անկախ ենթահամակարգերի ձևավորման, մշտադիտարկման գործընթացում շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման, մշտադիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատվության և խրախուսանքի կառուցակարգերի գործարկման միջոցով.

- որոշումների կայացման, իրականացման և վերահսկման գործընթացում քաղաքացիական հասարակության՝ լիարժեք և արդյունավետ մասնակցություն ապահովող անհրաժեշտ և վերաբերելի կարողությունների զարգացմանն աջակցելը:

2.2.Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանում և արդյունավետ քննություն

52. Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներից մեկը կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցներ սահմանելն է և նման վարքագծի դրսևորումներն արդյունավետ քննելը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՔՕ-ը սահմանում է մեկ տասնյակից ավելի կոռուպցիոն հանցագործություններ, սակայն դա լիարժեք չի արտացոլում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ծավալը և բովանդակությունը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության համակարգ չի գործում: Չկան պաշտոնատար անձանց կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու գործուն կառուցակարգեր, ճշգրիտ որոշված չէ կոռուպցիոն հանցանքների շրջանակը, իսկ այդ հանցանքների քննությունն իրականացնող մարմինների անկախության, մասնագիտացվածության և փոխգործակցության պահանջները միշտ չէ, որ պահպանվում են:

53. Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում **կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործուն համակարգ ներդնելու, ինչպես նաև շարունակաբար կատարելագործելու կոռուպցիոն դրսևորումների համար կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցները: Վերոնշյալի իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.**

- Մատչելի և կանխատեսելի ձևակերպել կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող դրույթները.

- ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան քրեական պատասխանատվություն սահմանել ակտիվ ու պասիվ կաշառակերության, ինչպես նաև մասնավոր հատվածում կաշառակերության համար.

- Խստացնել կոռուպցիոն հանցանքների համար սահմանված պատիժները, երկարաձգել դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները.

- Որպես պատժամիջոց անվերապահորեն բռնագրավել բոլոր այն եկամուտները, որոնք ստացվել են կոռուպցիոն հանցանքների կատարման արդյունքում, այն գույքը, որին ամբողջությամբ կամ մասնակիորեն վերածվել կամ փոխակերպվել են այդպիսի եկամուտները, ինչպես նաև այն գույքը, սարքավորումները և այլ միջոցները, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են օգտագործել կոռուպցիոն հանցանք կատարելիս.

- Կատարելագործել կոռուպցիոն վարքագծի հետևանքով պատճառված վնասի հատուցման մեխանիզմները:

54. Հակակոռուպցիոն ռազմավարության կարորագույն քայլերից է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների արդյունավետ քննության իրականացումը, ինչը դեռևս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: ՀՀ-ում կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերով նախաքննությունն իրականացնում են տարբեր քննչական մարմիններ, ինչն ինքնին դրական ազդեցություն չի ունենում քննչական գործունեության արդյունավետության վրա: Անհրաժեշտություն է առաջանում **գործարկելու կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգեր: Նման կառուցակարգերը գործարկելուն ուղղված միջոցառումներն են.**

- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահել լիազորություն՝ վարքագծի կանոնադրքերի պահանջների, ներառյալ շահերի բախման կանոնների, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմիններին.

- Մշակել կոռուպցիոն հանցանքների շրջանակը որոշելու պատշաճ մեթոդաբանություն և օրենքով սահմանել դրանց սպառիչ ցանկը.

- Հստակ տարանջատել կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը՝ հաշվի առնելով ինչպես այդ հանցանքների բնույթը, այնպես էլ դրանց կատարման մեջ մեղադրվող անձանց առանձնահատկությունները.

- Ապահովել, որպեսզի կոռուպցիոն հանցանքները քննեն նախաքննական մարմինների մասնագիտացված ստորաբաժանումները, իսկ այդ գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը և հետազայում մեղադրանքի պաշտպանությունն իրականացնեն բացառապես այդ գործերով մասնագիտացած դատախազները.

- Կոռուպցիոն բնույթի իրավախախտումները բացահայտելիս, ինչպես նաև դրանց կապակցությամբ քրեական վարույթ իրականացնելիս ուժեղացնել

օպերատիվ-հետախուզական գործունեություն, նախաքննություն և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների միջև համագործակցությունը.

- Մշակել կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկա, այն է՝ որոշակի սկզբունքների և չափորոշիչների ամբողջություն, որը հնարավորություն կտա իրավակիրառողին համակողմանիորեն բացահայտել կոռուպցիոն հանցագործության բոլոր փաստական հանգամանքները, անկախ դրա տեսակից, բնույթից և այն կատարած անձից:

2.3. Հանրային վստահության բարձրացումը

55. Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր բաղադրատարրերից է հանդիսանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարին: Այս առումով կարևորվում է հակակոռուպցիոն պայքարի միջոցների և կառուցակարգերի մասին հասարակության պատշաճ իրազեկումը: Վերջինիս հետ սերտորեն կապված է նաև հանրային ծառայողների, պատասխանատուների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթությունը: Այդուհանդերձ, այս բնագավառում մինչ օրս պետական մակարդակով էական քայլեր չեն ձեռնարկվել, հասարակությունը լիարժեք չի ընդգրկվել կոռուպցիայի դեմ տարվող պայքարին և օբյեկտիվորեն գրկված է եղել այդ գործընթացի վրա ներազդելու հնարավորությունից:

56. Բացի այդ, առայժմ բավականաչափ ակտիվ չէ իրավապահ մարմինների և հանրության համագործակցությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների հանդեպ հանրային վստահության ցածր մակարդակով: Հանրությունը իրավապահ մարմիններին կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար և ամբողջական տեղեկատվություն չի տրամադրում: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան անհրաժեշտ պայմաններ ազդարարության իրականացման համար: Առկա չէ այս գործունեությունը կարգավորող բավարար և համապարփակ օրենսդրական կարգավորումներ: Բացի այդ, ձևավորված չէ հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարին մղող դրական միջավայր: Թույլ է նաև պետության կողմից հանրության մեջ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների նկատմամբ անհանդուրժողականության վերաբերյալ քարոզչական աշխատանքների իրականացումը:

57. Վերոշարադրյալ հիմնահարցերը լուծելու համար կարևորվում է համալիր և հետևողական մի շարք քայլերի ձեռնարկումը: Այսպիսով, **կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ գործուն միջոցները.**

- Օրենքով սահմանել, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձինք հավասարապես օգտվում են տուժողների, վկաների և փորձագետների համար քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ պաշտպանության միջոցներից.

- ՀՀ քրեական օրենսգրքում առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն նախատեսել ազդարարությամբ պայմանավորված

գործունեության համար ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց գույքին կամ առողջությանը վնաս պատճառելու կամ այդպիսի սպառնալիքի համար, ինչպես նաև իրավապահ մարմնի ներկայացուցչի կողմից ազդարարի ոչ իրավաչափ գաղտնագերծման համար.

- Սահմանել, որ իրավապահ մարմինների հետ համագործակցության դեպքում կոռուպցիոն հանցանքներին առնչակից անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից կամ ակնկալել համեմատաբար մեղմ պատժվելու հնարավորության.

- Հանրությանը պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ հրապարակել ամփոփ տեղեկատվություն ձևավորված կարգապահական, վարչական և դատական պրակտիկայի վերաբերյալ.

- Հանրությանը պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել պետական ծառայողների պաշտոնանկության կամ տույժերի վերաբերյալ և հանրայնացնել հիմնավորումները՝ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության և այլ երաշխիքների տրամադրման նկատառումները.

- Կատարելագործել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վիճակագրության վարման և հաշվետվությունների ներկայացման համակարգերը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

3.1. Հակակոռուպցիոն ռազմավարությունը կրթության ոլորտում

3.1.1. Իրավիճակի նկարագրություն

58. Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: ՀՀ կառավարությունը որպես կրթության ոլորտի առաջնային խնդիրներ դիտարկում է կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, մատչելի և հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար:

59. Ներկայումս կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն, և հանրապետության տնտեսությունն ապահովվի մրցունակ մասնագետներով: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից: Այս նպատակադրումներին հասնելու կարևոր նախապայմաններից մեկը կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատումն է:

60. Այս առումով, 2009-2012 թթ.ի ընթացքում հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում կրթության ոլորտում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես,

- Մշակվել են «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին» տեղեկանքի և բնութագրիչների ձևերը, «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վորապատրաստման կարգը»: Լրամշակվել է «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթական հաջորդ աստիճանի փախադրման» և «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու», «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երշխավորությունների», «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման» կարգերը: Ներդրվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների միասնական համակարգը, որը ևս նպաստում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը ավագ դպրոցում, հեշտացվել է դպրոցից՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների անցման գործընթացը: Արդյունքում՝ հավասար պայմաններ են ստեղծվել բոլոր դիմորդների և ուսանողների համար: 2012թ.-ին հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդները ընդունելության քննությունները հանձնել են կենտրոնացված եղանակով՝ պետական բուհերի դիմորդների հետ միասին:

- Կառավարման թափանցիկության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի» համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել են իրենց տարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշները, ինչի արդյունքում ավելի քան 90 մասնավոր բուհերից այսօր գործում են 34-ը: Ընդլայնվել են Կրթության պետական տեսչության գործառույթները: Տեսչության կազմում գործում է նոր՝ «Մասնագիտական կրթության տեսչավորման» բաժինը: Բոլոր բուհերում գործում է նոր՝ «Մասնագիտական կրթության տեսչավորման» բաժինը: Բոլոր բուհերում ներդրվել և գործում են որակի ներքին ապահովման կենտրոններ: Հայաստանի Հանրապետության բուհերը ներակայցնում են որակի ներքին ապահովման վերլուծական հաշվետվություններ:

- Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011թ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում (www.edu.am, www.armedu.am), ինչպես նաև «Կրթություն» շաբաթաթերթում: ՀՀ մարզերի և

Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (գրեթե 90%-ում) իրականացվել է ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարքի թեմատիկ ստուգում:

- Մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթը, որի բաղադրիչներից է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումը: 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմից համանման սեմինար քննարկումների և վերապատրաստումների մասնակցել են ընդհանուր թվով 30 մասնագետներ:

- Կրթության ոլորտում հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական և մանկավարժական խորհուրդների, ինչպես նաև մեթոդական միավորումների մասնակցությունն ապահովող դրույթները: Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են աշակերտական խորհուրդների լիազորությունները: Հաստատվել է աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, որով հստակեցվել են խորհրդի իրավասությունների և պատասխանատվության շրջանակները: Խստացվել է դպրոցում սահմանված գործառնական ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողությունը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից 2011 և 2012 թվականների ավագ դպրոցում սովորողների շարքի ուսումնասիրությունների համաձայն հանրապետության մասշտաբով 2012 թվականին 2011 թվականի համեմատ սովորողների ընդունելությունը ավելացել է 0.8%-ով, իսկ տեղափոխությունը նվազել է 7%-ով:

- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկության ու անկախության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ: Միասնական և ավարտական քննությունների թափանցիկությունն ապահովելու նպատակով 2012 թ. սկզբին հրատարակվել են «Հայոց լեզու, գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների շտեմարանները՝ օգտագործելով նաև հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների ներկայացրած թեստերի նմուշները (Ա և Բ մակարդակներով): 2013 թվականին դիմորդը նախապես տեղեկացված էր նշված առարկաների քննության ժամանակ իր առջև դրվող թեստի առաջադրանքներին:

- Կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագրերի իրականացման ռազմավարական դրույթի շրջանակում

Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացման նպատակով լուսաբանվել է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը: ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում գործում է հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ, որտեղ զետեղված են «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012թթ միջոցառումների համալիր ծրագիրը», ինչպես նաև այդ ծրագրի հետ կապված հաշվետվությունները հրապարակվել են տարբեր լրատվամիջոցներով:

- Միայն 2012 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել է 600 լրատվական և տեղեկատվական նյութ՝ նպատակ ունենալով ապահովել նախարարության թափանցիկ և հաշվետվողական աշխատանքը, այդ թվում՝ հասարակությանը հուզող հարցերին արագ արձագանքելու միջոցով: Հեռարձակվել է 18 հեռուստառեպորտաժ, հրապարակվել է 55 տեղեկատվական նյութ մամուլի ասուլիսների մասին և 75 տեղեկատվական նյութ՝ հակակոռուպցիոն ծրագրերի մասին:

3.1.2. Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները

61. Կրթության բոլոր մակարդակներում իրականացվող բարեփոխումները, այդ թվում՝ 12-ամյա կրթության ներդրումը, երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցումը երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության (ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ 2014թ. սեպտեմբերից), ինչպես նաև մասնագիտական կրթության համակարգի զարգացումը ենթադրում են կրթության ոլորտում քաղաքացիների ընդգրկվածության զգալի աճ՝ որի արդյունքում ավելի մեծ թվով քաղաքացիներ են առնչվելու կրթության ոլորտին: Ուստի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը կարող են վտանգել և՛ կրթության ոլորտում իականացվող բարեփոխումների հաջող ընթացքը, և՛ ունենալ ոչ ցանկալի հետևանքներ՝ կրթության նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման հարցում:

62. Այս առումով, կրթության ոլորտում կոռուպցիայի բացահայտման, կանխարգելման ու հաղթահարման տեսանկյունից առկա հիմնախնդիրները հետևյալն են՝

- իրավական ակտերի վերանայում, կոռուպցիոն ռիսկերի գնահատում,
- կրթության ոլորտի կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում: Բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա է մասնագիտական կրթության որակի ապահովման մեխանիզմների ոչ մասնակցային և ոչ թափանցիկ ապահովում և կիրառում: Շարունակական հարցումները ցույց են տալիս, որ հանրության վստահությունը կրթության որակի ապահովման կառույցների նկատմամբ բավականին ցածր է:

- կրթության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում: Անկատար և իրարամերժ օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս գործադիրի միջամտություն բՈՒՀ-երի կառավարմանը, ինչը հանգեցնում է բՈՒՀ-երի ինքնակառավարման բացակայությանը:

- հանրակրթության ոլորտի կադրային քաղաքականության վերանայում: Մասնավորապես, տնօրեններն ընտրվում են դպրոցի կառավարման խորհրդի կողմից, սակայն նշանակվում են և պայմանագիր կնքում են գործադիրի հետ (ԿԳՆ կամ մարզպետարան/քաղաքապետարան): Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, աշխատանքի ընդունումը, տեղաբաշխումը և աշխատանքային պայմանագրի լուծումը իրականացվում է դպրոցի տնօրենի կողմից՝ միանձնյա: Ուսուցիչների ատեստացիաները չեն համապատասխանում մասնագիտական և աշխատանքային կարիքներին: Ատեստավորման հստակ չափանիշների և գնահատման մեթոդների բացակայությունը կարող է հանգեցնել ուսուցիչներին աշխատանքից հեռացման:

- հանրակրթության ոլորտում դասագրքերի մշակման և գնումների իրականացման գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի վերհանում: Դասագրքերի մշակման և տպագրման մրցույթները մեծամասամբ հաղթում են նույն կազմակերպությունները: Բացի այդ, դպրոցները հաճախ ընտրում են մեկ դասագիրք, սակայն արդյունքում ստանում են մեկ այլ՝ այլընտրանքային դասագիրք: Դրա հիմնական պատճառն այն է, որ տպարանում կուտակվում են գրքեր, որոնք պետք է սպառվեն: Միաժամանակ, դասագրքերի շրջանառու հիմնադրամի և դասագրքերի վարձակալման համակարգերը թափանցիկ չեն և չկա հստակ հանրային հաշվետվողականության համակարգ: Միջանկյալ ստուգողական տետրերը թեև ազատ վաճառքում չպետք է լինեն, սակայն տպարաններից և առևտրի կետերից դրանք հնարավոր է ձեռք բերել:

- ավարտական քննությունների հետ կապված գործընթացների կանոնակարգում , կոռուպցիոն ռիսկերի վերհանում և բացառում: Մատուցվող կրթական նյութը և ավարտական քննությունների ժամանակ ստուգվող գիտելիքները չեն համապատասխանում միմյանց, ինչի արդյունքում զարգանում է կրկնուսույցներ ինստիտուտը: Ընդ որում, առավել պահանջված կրկնուսույցները շտեմարանների հեղինակներն են, որոնց մոտ պարապելը ինչ-որ չափով երաշխավորում է շտեմարաններում առկա նյութի լիարժեք տիրապետումը: Շտեմարաններ չեն համապատասխանում դպրոցում ուսուցանվող կրթական նյութին, ինչի արդյունքում ավարտական քննությունները դառնում են կոռուպցիայի աղբյուր: Ավագ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները հանդուրժում են երեխաների դասերից բացակայությունը կամ դասերի ընթացքում տվյալ առարկայի դասով զբաղվելու փոխարեն կրկնուսույցի առաջադրանքները կատարելը՝ կամ իրենց մոտ հավելյալ վճարով կրկնակի պարապելու կամ համապատասխան «վերաբերմունք ցույց տալու» դիմաց:

- Դպրոցների վարկանիշավորման համակարգի ներդնում:

- Ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդնում, կոռուպցիոն վարքագծի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում և իրազեկվածության բարձրացում: Դպրոցների ֆինանսավորման վերաբերյալ պետք է նշել, որ երեխա-թվով ֆինանսավորումը առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր՝

միմյանց մոտ գտնվող դպրոցների տնօրենների կողմից ծնողներին «հանդուրժողական մոտեցման» դիմաց գրավելու և դպրոցի երեխաների թվաքանակը ավելացնելու գործում: Այս պրակտիկան ազդում է կրթության որակի վրա: Քանի որ ծնողների համար կարևորվում է բարձր գնահատական ստանալը, արդյունքում դպրոցները համաձայնվում են երեխաների թվաքանակն ավելացնելու նպատակով՝ զիջել կրթության որակի հանդեպ պահանջատիրության հարցում: Դպրոցների ֆինանսական թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմներն անկատար են: Բացի այդ, անհրաժեշտ է ՀՀ ԿԳՆ համակարգում իրականացնել ֆինանսական ռեսուրսների նպատակային բաշխում: ՀԲ-ի և այլ կազմակերպությունների վարկային միջոցների օգտագործման թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմներն անկատար են:

- ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում,
- կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգ,
- ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացում:

3.1.3. Կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները

63. Կրթության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության նախապայմաններից մեկը իրավական դաշտի կատարելագործումն է, իրավական բացերի վերացումը: Կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման առումով նպատակահարմար է, որպեսզի բոլոր իրավական ակտերը նախապես անցնեն հակակոռուպցիոն փորձաքննություն և դրվեն հանրային քննարկման:

- կրթության ոլորտի կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ է քայլերի ձեռնարկում: Այս առումով, անհրաժեշտ է հզորացնել կրթության ոլորտի կառավարման մարմինների կարողությունները՝ կոռուպցիայի կանխարգելման գործում, բարձրացնել կրթական հաստատություններում կադրերի ընտրության և նշանակման գործընթացների թափանցիկությունը, ընդլայնել կրթության ոլորտին առնչվող տեղեկատվության տրամադրման աղբյուրները, ապահովել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների մատչելիությունն ու կրթական հաստատությունների ընթացիկ (այդ թվում՝ ֆինանսական) գործունեության մասին պարբերական հաշվետվությունների հրապարակումը: Այս նպատակով անհրաժեշտ է կարգավորել մանկավարժական կադրերի ընտրության մրցութային գործընթացը, ներդնել կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջխաղացման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր, սահմանել կրթական հաստատությունների աշխատողների համար պաշտոնի նկարագրություն և վարքագծի միասնական կանոններ, ուսուցչի և

դասախոսի անձնական գործը որպես հրապարակային փաստաթուղթ սահմանել, ներդնել այս փաստաթղթի հրապարակման կարգը:

- կրթության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում: անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ոլորտը որակյալ մասնագետներով համալրելու գործընթացի ուղղությամբ, շարունակաբար բարելավել այդ մասնագետների մասնագիտական կարողությունները, ընդլայնել նրանց իրազեկվածությունը՝ հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով: Կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատման ու դրանց կանխարգելման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև գործող օրենսդրության բարելավումը՝ բացառելով դրանում առկա հակասություններն ու անհարկի կրկնությունները, ինչպես նաև իրականացնելով կրթության ոլորտում արձանագրվող՝ կոռուպցիոն բնույթի իրավախախտումներին առնչվող տեղեկատվության ու գործող իրավական ակտերի վերլուծություններ:

- վերանայել գործող օրենսդրությամբ՝ կրթական հաստատությունների աշխատակիցների համար նախատեսված պաշտոնի նկարագրությունը, նրանց համար սահմանել էթիկայի սկզբունքներ ու վարքագծի միասնական կանոններ, ինչպես նաև շահերի բախման տեսանկյունից վերանայել կրթական հաստատությունների աշխատակիցների համար նախատեսված՝ անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների շրջանակը, սահմանվող վարքագծի միասնական կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն ու հսկողություն իրականացնելու նպատակով ձևավորել էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցով պատասխանատուներ:

- մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը՝ քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: Անհրաժեշտ է բարձրացնել հանրության իրազեկվածությունը՝ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ու ծրագրերի վերաբերյալ, նպաստել երկխոսության նոր հարթակների ձևավորմանը, ընդլայնել քաղաքացիական հասարակության մասնակցությունը կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման ու կանխարգելման գործընթացում՝ համատեղ իրականացնելով սոցիոլոգիական հարցումներ ու հետազոտություններ:

- կոռուպցիոն վարքագծի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում և իրազեկվածության բարձրացում: Կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոցը միշտ եղել և մնում է կրթությունը, որը հիմքեր է ստեղծում երիտասարդների արժեհամակարգում նման երևույթների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ձևավորելու և քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու համար: Ուստի կարևոր է սովորողների համար հակակոռուպցիոն դասընթացների ու միջոցառումների անցկացումը, որը կնպաստի նրանց իրազեկվածության բարձրացմանն ու սեփական իրավունքների կարողությունների զարգացմանը:

3.2. Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում

3.2.1. Իրավիճակի նկարագրություն

64. Կոռուպցիայի դեմ պայքարը հարկային վարչարարության շարունակական բարեփոխումների իրականացման կարևոր ուղղություններից է: Հարկային և մաքսային համակարգերում կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախորդ տարիներին էական քայլեր են իրականացվել: Մասնավորապես, հետևողականորեն իրագործվել են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով սահմանված քայլերը, ինչի արդյունքում զգալի նվազեցվել է հարկային ծառայող-հարկ վճարող անմիջական շփումը, բարձրացվել է հարկային մարմնում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունը:

65. Հարկային և մաքսային մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարում ձեռք բերված հիմնական արդյունքներն են.

- էականորեն նվազել են հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները՝ գերազանցապես հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների մատուցման, հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի ամբողջական գործարկման, ռիսկերի վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգերի ներդրման միջոցով,
- իրականացվել են շարունակական աշխատանքներ հարկ վճարողներին իրազեկման բնույթի ծառայությունների մատուցման շրջանակի ընդլայնման, հարկերի վճարման և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության, հարկային օրենսդրության վերաբերյալ բացատրական աշխատանքների մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ հարկ վճարողների սպասարկման կենտրոնների, հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի գործարկման, ինտերնետային կայքերի, պարզաբանումների տրամադրման սխեմայի կատարելագործման միջոցով,
- իրականացվել են շարունակական աշխատանքներ մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորման հստակեցման, պարզեցված ընթացակարգեր ներդնելու, մաքսային արժեքների որոշման հստակ չափանիշներ սահմանելու ուղղությամբ: Ներդրվել են մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման ընթացակարգեր,
- հարկային և մաքսային համակարգերում էական աշխատանքներ են տարվել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, վերանայվել, հստակեցվել են համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, մշակվել են հարկային և մաքսային ծառայողների պաշտոնների նկարագրերը, որով հստակեցվել է հարկային ծառայողների աշխատանքային պարտականությունների

շրջանակը, ներդրվել է հարկային և մաքսային ծառայողների պարտադիր վերապատրաստման սխեմա՝ հաստատված ծրագրին համապատասխան,

- բարելավվել են գանգատարկման ընթացակարգերը և բարձրացվել է հարկ վճարողների վստահությունը գանգատարկման համակարգի նկատմամբ,
- հարկային և մաքսային համակարգերում արդյունավետ կերպով ներդրվել են ներքին հսկողության իրականացման ընթացակարգերը,
- սահմանվել են պարզեցված մաքսային ընթացակարգեր բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների համար: Ներդրվել է լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտը, վերջիններիս օրենսդրությամբ իրավունք է վերապահվել կիրառելու արտահանման, ներմուծման պարզեցված ընթացակարգեր, սահմանվել են լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրելու չափանիշները:

3.2.2. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները

66. Առաջիկայում հարկային մարմնի գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, ներքին հսկողական մեխանիզմների կատարելագործման ապահովման նպատակով անհրաժեշտ է.

- շարունակել օրենսդրական կարգավորման մեխանիզմների հետագա պարզեցումը և հստակեցումը, օրենսդրության մեջ առկա հակասությունների, կրկնությունների բացառումը: Կմեկնարկեն հարկային օրենսդրության և հարկային համակարգի կայունության, կանխատեսելիության ապահովմանն ուղղված՝ միասնական հարկային օրենսգրքի մշակման աշխատանքները, արդյունքում մեկ փաստաթղթում կհամախմբվեն և կպարզեցվեն հարկային օրենսդրությունն ու հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերը, կվերացվեն դրանցում առկա կրկնությունները, անհստակությունները, տարընթերցման պատճառ հանդիսացող դրույթները,

- բարձրացնել հարկային և մաքսային մարիների գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունը: Աշխատանքներ կտարվեն կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, հասարակությանը պարբերաբար իրազեկման, ծառայողական քննությունների ընթացակարգերի կատարելագործման, ծառայողական քննությունների արդյունքների պարբերաբար հրապարակման ուղղությամբ,

- կատարելագործել ներքին հսկողական ընթացակարգերը՝ հարկ վճարողների հետ աշխատանքներում ներգրավված հարկային ծառայողների նկատմամբ վերահսկողության իրականացման, ներքին հսկողության ուժեղացման միջոցով:

3.3. Հակակոռուպցիոն ռազմավարությունը ոստիկանության ոլորտում՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով

3.3.1. Իրավիճակի նկարագրություն

67. Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային քաղաքականության իրականացման ուղղությամբ ոստիկանության համակարգում կատարվող շարունակական աշխատանքները սկսում են կրել առավել համակարգված բնույթ: Մասնավորապես, ոստիկանության կողմից բազմակողմանի միջոցներ են ձեռնարկվում համակարգի բոլոր ոլորտներում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված իրավական, տնտեսական, կրթական, կազմակերպչական և այլ ծրագրերի հետևողական կիրառումն ապահովելու համար: Նշված նպատակներին հասնելու և դրանց արդյունավետությունն ապահովելու համար իրականացվող աշխատանքների հիմքում դրվում են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են նպատակների իրագործելիությունը, շարունակականությունը, հետևողականությունը, գործունեության հրապարակայնությունը և այլն:

68. 2009-2012 թթ.ի ընթացքում հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում ոստիկանության ոլորտում իրականացվել են մի շարք միջոցառումներ և, ըստ այդմ, գրանցվել են մի շարք արդյունքներ: Մասնավորապես,

- ճանապարհային ոստիկանության գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակներում սահմանվել են ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր,

- ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչային ծրագիր: Ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները էլեկտրոնային տարբերակով տրամադրվում են ապահովագրական ընկերություններին և լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցով: Կատարելագործվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: Կանոնակարգվել է բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս: Բնակչության պետական ռեգիստրի բազայում ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշների համակարգը, և քաղաքացուն հատկացվող ծառայությունների համարանիշը օրենքով սահմանված անհատական տվյալների հիման վրա գեներացվում է ավտոմատ եղանակով: Կատարելագործվել է ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը: 2012 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության «ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 1672-Ն որոշմամբ ստեղծվել է ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով: Ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակը 2012 թվականին կազմել է 1576, իսկ ծառայողական քննությունների թիվը՝ 1802: Հայաստանի Հանրապետության ոստիկանության նոր՝ www.ploice.am

ինտերնետային կայքէջի «Օգնություն քաղաքացիներին» բաժնում (5,517 այցելություն) քաղաքացիներն ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալներին կայքից դիմումներ ուղարկելու հնարավորություն,

- Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու նպատակով պարզեցվել է վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու, տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրացման, հաշվառման, համարանիշների և վկայագրերի հատկացման, ինչպես նաև վարորդական վկայականների տրման, փոխանակման ընթացակարգերը: Այս ծառայությունները կազմակերպվում են մասնագիտացված և տեխնիկապես հագեցած կառույցներում: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համատեղ նախաձեռնությամբ պետական եկամուտների կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսային կետի վարչական տարածքում ստեղծվել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի հաշվառման-քննական բաժնի սպասարկման կետ,

- Անձնագրային վիզաների վարչության Աշտարակի, Մասիսի, Արտաշատի, Արմավիրի անձնագրային բաժանմունքներում և Ավանի, Դավթաշենի անձնագրային խմբերում, Թումանյանի, Բազումի, Ախուրյանի, Տաշիրի, Նոյեմբերյանի, Կապանի, Սիսիանի, Գորիսի, Վայքի, Եղեգնաձորի, Վարդենիսի անձնագրային բաժանմունքներում տեղադրվել են անձնագրային ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային վճարային տերմինալներ, ինչի շնորհիվ զգալիորեն արագացել է քաղաքացիների սպասարկման արագությունը,

- Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության մասնաշենքում գործարկվել է անլար ինտերնետ (WIFI) համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռնել վարչություն այցելող քաղաքացիներին անվճար օգտվել ինտերնետից: Ներդրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և հատուկ կացության ռեգիստր՝ անհատական տվյալների էլեկտրոնային համակարգ,

- Ներդրվել է սեփականատիրոջ դիմումի հիման վրա բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին կարճ ժամանակում հաշվառումից հանելու պարզեցված ընթացակարգ: Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 1435-Ն որոշմամբ բնակչության պետական ռեգիստրում անձանց հաշվառման և հաշվառումից հանելու գործընթացը պարզեցվել է, համաձայն որի անձնագրային ծառայությունը բնակելի տարածության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձանց ցուցակը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրից պարզում է էլեկտրոնային եղանակով,

- Անձնագրային բոլոր ծառայություններում (բացառությամբ Դավթաշենի և Քանաքեռ-Զեյթունի), տեղադրվել են անձը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի համակարգեր, ինչը հնարավորություն է տվել սպասարկել մարզերի

բնակիչներին և, այդ թվում՝ կենսաթոշակային բարեփոխումներով պայմանավորված:

- Ստեղծվել է արագ արձագանքման «Թեժ գիծ» ծառայությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանության «police.am» կայքէջից օգտվողների թիվը 2012 թվականին կազմում է մոտ 46092, իսկ «passportvisa.am» կայքէջ մուտքի թիվը 2012 թվականի ընթացքում հասել է 303739-ի:

3.3.2. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտում առկա հիմնախնդիրները

69. Կոռուպցիայի դեմ տարվող պայքարում շարունակվում է արդիական մնալ ինչպես քաղաքացիներին ծառայությունների մատուցման, այնպես էլ գործունեության մյուս ոլորտներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը, ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդումը: Այսպես՝

- Ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների բարձրացման, ինչպես նաև քաղաքացիների հետ շփվելու ընթացքում էթիկայի կանոնների անթերի պահպանման ուղղությամբ ՀՀ ոստիկանությունը դեռևս անելիքներ ունի: Մանավորապես, քաղաքացիներին ծառայությունների մատուցման ընթացքում կոռուպցիոն ռիսկերը բացառելու նկատառումով չափազանց կարևոր է գրագետ, բանիմաց և բարեկիրթ ոստիկանի կերպարի ձևավորումը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շարունակել ոստիկանության ծառայողների վերապատրաստմանն ուղղված տարբեր դասընթացները, ինչպես նաև վերջիններիս ծառայողական պարապմունքների թեմատիկ պլաններում առանձնակի տեղ հատկացնել էթիկայի կանոններին ու ոստիկանության ծառայողի մասնագիտական պատրաստվածության բարձրացմանն առնչվող հարցերին:

- ՀՀ ոստիկանությունում կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով բացառիկ կարևոր նշանակություն ունի նաև ոստիկանությունում ներքին վերահսկողական և հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործումը: Այս նպատակի համար անհրաժեշտ կլինի ուսումնասիրել առկա վիճակը և, այն համադրելով միջազգային առաջավոր փորձի հետ, ներկայացնել ներքին հաշվետվողականության մեխանիզմների զարգացմանն ուղղված համապատասխան առաջարկություններ՝ անհրաժեշտության դեպքում կատարելով օրենսդրական փոփոխություններ:

- Ոստիկանության գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված շարունակական քայլեր իրականացնելու և հասարակության վստահության բարձրացման նպատակով ոստիկանությունում անհրաժեշտ է պարբերաբար հանդիպումներ կազմակերպել ՀԿ-ների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և քաղաքացիների հետ, ինչը հնարավորություն կընձեռի ամրապնդել հասարակություն-ոստիկանություն կապը, ինչպես նաև ոստիկանության գործունեության ոլորտում վեր հանել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և

կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված՝ հասարակության պահանջով պայմանավորված նախատեսել չծրագրված նոր միջոցառումներ:

- «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն ծառայողական քննության առիթ հանդիսացող հաղորդում, դիմում կամ այլ տեղեկատվություն ներկայացնող անձի իրավունքները: Ծառայողական քննության նյութերը որպես կանոն համարվում են գաղտնի և չեն տրամադրվում բողոք, դիմում ներկայացրած անձին: Միաժամանակ, բացակայում են կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ բողոքող անձանց պաշտպանության և խրախուսման արդյունավետ մեխանիզմներ, ավելին՝ հաճախ նման բողոքներ ներկայացնող անձինք նախազգուշացվում են, որ իրենց հանդեպ կարող է հարուցվել, որոշ դեպքերում նաև հարուցվում է քրեական գործ սուտ մատնություն կատարելու հիմքով, ինչը կոռուպցիոն երևույթների վերաբերյալ բողոք ներկայացնելու զսպող հանգամանք է: Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ մեխանիզմներ ստեղծելու բողոքների քննարկման ընթացակարգերի թափանցիկությունն ապահովելու համար:

- «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը մակերեսորեն է կարգավորում ոստիկանության ծառայողների նշանակման և առաջխաղացման մեխանիզմները, ինչը կարող է հանգեցնել հայեցողության լայն դրսևորումների, հավասարության և ծառայողական առաջխաղացման հնարավորությունների կիրառման ընթացքում միատեսակ մոտեցման բացակայությանը, ոստիկանության ծառայողների համար անորոշության մթնոլորտի, ինչն էլ իր հերթին կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր: Անհրաժեշտություն է առաջանում ոստիկանության ծառայողի պաշտոնի նշանակման և առաջխաղացման մեխանիզմների մշակման և ներդրման:

- ՀՀ ոստիկանության ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության երաշխիքները բավարար չեն: Ոստիկանությունում ծառայության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ քայլ է վերոնշյալ երաշխիքների ապահովումը:

- ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող խնդիրների շարքում առանձնակի տեղ ունի նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտը: Նշված ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի բացառման նպատակով դեռևս որոշակի գործնական քայլեր իրականացնելու անհրաժեշտություն կա: Ծանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել բարելավել ՃՈ տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների շենքային պայմանները, համապատասխան համակարգերով կահավորման արդյունքում քաղաքացիներին սպասարկել ավելի արագ, որակյալ և պարզեցված ընթացակարգով:

- Վարորդական վկայական ստանալու համար գործնական քննության անցկացման ժամանակ ՀՀ ոստիկանության կողմից դեռևս օգտագործվում են քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ, որպեսզի քննություններն անցկացվեն ՀՀ ճանապարհային ոստիկանության համապատասխան տրանսպորտային միջոցներով:

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության գործունեության ոլորտում ևս աշխատանքների բարելավմանն ուղղված շարունակականություն ապահովելու և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակն առավել բարձրացնելու անհրաժեշտություն կա:

- Այսպես, երբեմն վարույթ իրականացնող մարմինների կողմից պահանջվում են քաղաքացու անձնագրային գործողությունների վերաբերյալ դիմումը, անհատական հաշվառման քարտը և անձնագրավորման հիմքերը, սակայն դրանք տրամադրել ոչ միշտ է հնարավոր լինում՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով (օրինակ՝ դրանք բացակայում են քարտադարաններից): Հիշյալ փաստաթղթերն ամենօրյա օգտագործման փաստաթղթեր են, դրանց պահպանումը կոնկրետ անձի հանձնելը հնարավոր չէ. արդյունքում հնարավոր չի լինում պարզել այն պաշտոնատար անձին, որի մեղքով անձնագրավորման փաստաթղթերը բացակայում են: Վերը նշված խնդիրը լուծել հնարավոր է անձնագրային և վիզաների վարչությունում ՀՀ քաղաքացու անձնագրավորման գործընթացի հետ կապված փաստաթղթերի սկանավորման և դրանք էլեկտրոնային կրիչների վրա պահպանելու համակարգ ներդնելու միջոցով:

- ՀՀ քաղաքացիներին օրենսդրությամբ հնարավորություն է ընձեռված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա ինչպես աշխատանքային ժամերին, այնպես էլ դրա ավարտից հետո և ոչ աշխատանքային օրերին ՀՀ պետական սահմանի անցակետերում դիմելու օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու համար, սակայն ՀՀ պետական սահմանի որոշ անցակետերում /«Բավրա» և «Գոգավան»/ տվյալ ծառայությունների մատուցման համար դեռևս բացակայում են տեխնիկական հնարավորությունները, հետևաբար անհրաժեշտ է նշված սահմանային անցակետերն ապահովել տեխնիկական համապատասխան միջոցներով՝ օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու համար:

- Անհրաժեշտություն կա բարելավելու նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերող իրավահարաբերությունները: Մասնավորապես, ներպետական իրավահամակարգում առկա բացերը լրացնելու, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացման ոլորտը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը սահմանող նորմերը, ոլորտին առնչվող լիազոր պետական մարմինների իրավասությունները, կոնկրետացնել քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի համար դիմումի ներկայացման, դրա քննարկման և վերջնական որոշում կայացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանել քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացման հստակ

ընթացակարգ, ինչպես նաև բացառել քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հետ կապված հնարավոր շահարկումները:

- Զինճառայության զորակոչվելիս կամ ազատազրկման դատապարտվելու կապակցությամբ՝ պատիժը քրեակատարողական հիմնարկում կրելիս բնակչության պետական ռեգիստրում անձի մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն փոխվում է և անձը հաշվառվում է համապատասխանաբար ըստ զորակոչման կամ ըստ ազատազրկման վայրի: Սակայն, օրենսդրությամբ կարգավորված չէ զորացրվելուց կամ ազատազրկման վայրից վերադառնալուց հետո վերջիններիս հաշվառումը վերականգնելու համար փաստաթղթեր ներկայացնելու պահանջը, հետևաբար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել նաև նշված խնդիրը լուծելու ուղղությամբ:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու համար անձը հայերեն լեզվով լրացնում է դիմում և հարցաթերթիկ, սակայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն հիշյալ նպատակով դիմած ազգությամբ հայ ոչ բոլոր անձինք են հայերեն լեզվին բավարար չափով տիրապետում և ստիպված են լինում դիմել այլ անձանց օգնությանը, ինչը չի բացառում նաև կոռուպցիոն ռիսկերը տվյալ հարաբերությունների ընթացքում: Այս խնդրին լուծում տալու նպատակով նախատեսվում է օրենսդրական փոփոխությունների կատարում՝ սահմանելով դիմողի կողմից հարցաթերթիկը կամ դիմումը լրացնելը հնարավոր չլինելու դեպքում դրանք անձնագրային ծառայության համապատասխան աշխատակցի կողմից լրացնելու վերաբերյալ:

• Օրենսդրական բազմաթիվ հակասություններ և բացթողումներ են ի հայտ եկել զենքի և ռազմամթերքի շրջանառության ոլորտում, որոնք հիմնականում պայմանավորված են հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքում ազգային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով: Գործող օրենսդրությունն ամբողջությամբ չի կարգավորում զենքի շրջանառության ընթացքում ծագող հարաբերությունները: Զենքի շրջանառության ոլորտում վարչարարության պարզեցման, օպտիմալացման և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանայելու որոշ տեսակների թույլտվությունների և լիցենզիաների գործողության ժամկետի երկարաձգելու հետ կապված դրույթները, օրենսդրորեն ամրագրել իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների ողջ ծավալը, ինչպես նաև լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման ընթացակարգերին վերաբերող հիմնական նորմերը, ինչի արդյունքում կբացառվեն հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:

3.3.3. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները

70. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում առկա բացերը և խնդիրները լուծելու, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությունն արդյունավետ կերպով իրագործելու նպատակով նախատեսվում է 2014-2018թթ. ընթացքում իրականացնել մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝

- Քաղաքացիների հետ շփում ունեցող ոստիկանության ծառայողների համար մշակել ուսուցման ծրագրեր, կազմակերպել դասընթացներ, ինչպես նաև վերապատրաստում ՀՀ և օտարերկրյա ուսումնական հաստատություններում՝ շարունակաբար կատարելագործելով վերապատրաստման ծրագրերը: Միջոցառումը հնարավորություն կտա բարձրացնել ոստիկանության ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը և ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների որակը, ոլորտում նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

- ՀՀ ոստիկանության կողմից ՀԿ-ների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների և քաղաքացիների հետ պարբերաբար կազմակերպել քննարկումներ, ինչը հնարավորություն կտա ապահովել ՀՀ ոստիկանության գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված աշխատանքների շարունակական իրականացումը, վեր հանել ոստիկանության գործունեության ընթացքում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված՝ հասարակության պահանջով պայմանավորված չծրագրած նոր միջոցառումներ:

- Ուսումնասիրել ոստիկանությունում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը և ներկայացնել ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ ներքին վերահսկողական մեխանիզմների կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկություններ, արդյունքում միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա վեր կհանվեն հնարավոր կոռուպցիոն ռիսկային գործոնները, միջոցներ կձեռնարկվեն ՀՀ ոստիկանությունում առավել արդյունավետ ներքին հաշվետվողականության մեխանիզմների ստեղծման համար:

- «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում սահմանել ծառայողական քննության առիթ հանդիսացող հաղորդում, դիմում կամ այլ տեղեկատվություն ներկայացնող անձի իրավունքները: Նախատեսել և ներդնել կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ բողոքող անձանց պաշտպանության և խրախուսման արդյունավետ մեխանիզմներ:

- Մշակել և ներդնել ոստիկանության ծառայողներին պաշտոնի նշանակման և առաջխաղացման մեխանիզմներ:

- Սահմանել ՀՀ ոստիկանության ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության երաշխիքներ:

- Ճանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների համար ձեռք բերել նոր շենք-շինություններ, դրանք նորոգել ու կահավորել ժամանակակից տեխնիկական համակարգերով, հագեցած քաղաքացիներին առավել արագ, որակյալ և պարզ ընթացակարգով սպասարկելու համար անհրաժեշտ սարքերով:

- Վարորդական վկայական ստանալու նպատակով գործնական քննության անցկացնելու համար ձեռք բերել տրանսպորտային միջոցներ՝ քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցներով քննությունների անցկացումը բացառելու համար:
- Ներդնել ՀՀ քաղաքացու անձնագրավորման հետ կապված փաստաթղթեր սկանավորման և էլեկտրոնային կրիչի միջոցով պահպանելու համակարգ, որը հնարավորություն կստեղծի վերահսկելի դարձնել անձնագրային գործողությունների կատարման որակը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:
- ՀՀ պետական սահմանի «Բավրա» և «Գոգավան» սահմանային անցակետերում, վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու համար տեխնիկական հնարավորություններ նախատեսել:
- Իրականացնել քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակին առնչվող հարաբերությունների կարգավորմանն ուղղված միջոցառումներ՝ ՄԱԿ-ի ընդունած չափանիշներին համապատասխան նրանց իրավունքների իրացման ոլորտը կանոնակարգելու և իրավական կարգավիճակին վերաբերող նորմերն օրենսդրորեն ամրագրելու համար:
- Զորացրվելուց կամ ազատագրված վայրից վերադառնալուց հետո բնակչության պետական ռեգիստրում անձանց հաշվառումը վերականգնելու կամ նոր փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության օրենսդրական ամրագրում՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» թիվ 1231-Ն որոշման մեջ:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն դիմած անձանց կողմից հարցաթերթիկը կամ դիմումը լրացնելը հնարավոր չլինելու դեպքում դրանք ոստիկանության ծառայողի միջոցով լրացնելու վերաբերյալ դրույթների ամրագրում՝ հնարավոր կոռուպցիոն դրսևորումները բացառելու նպատակով:
- Վերանայել զենքի շրջանառության ոլորտում տրամադրվող թույլտվությունների և լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման վերաբերյալ իրավանորմերը, զենքի և ռազմամթերքի շրջանառության ոլորտում առկա օրենսդրական հակասություններն ու բացթողումները վերացնելու և զենքի շրջանառության ընթացքում իրականացվող վարչարարության պարզեցման նպատակով ընդունել նոր օրենք:

3.4. Հակակոռուպցիոն ռազմավարությունը առողջապահության ոլորտում

3.4.1. Իրավիճակի նկարագրություն

71. Կոռուպցիայի դեմ պայքարը առողջապահության ոլորտի շարունակական բարեփոխումների իրականացման առանցքային ուղղություններից է: 2009-2012 թթ.ի հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում առողջապահության ոլորտում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում գրանցվել են հետևյալ արդյունքները.

- հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայվել և փոփոխվել է հիվանդանոցային ծառայությունների փաթեթը, ինչն արտացոլված է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» բուժհաստատությունների հետ կնքված պայմանագրերում: Հիվանդանոցներում համավճարի սկզբունքի ներդրման համար հաստատվել են «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» բյուջետային ծրագրերը: Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է միայն ծննդօգնության և երեխաների (մինչև յոթ տարեկան) բժշկական օգնության ծրագրերում:

- Առողջապահության համակարգում գնագոյացման համակարգի բարելավման և ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանների վերացման ռազմավարական դրույթների շրջանակում համավճարի սկզբունքը ներդրվել է նաև «Ուռուցքաբանության արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում: Հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների նվազագույն և առավելագույն կողմնորոշիչ գների սանդղակը՝ դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի, և բժշկական ծառայությունների ինքնարժեքի ծախսային հոդվածների կողմնորոշիչ նորմատիվները: Այդ նորմատիվներով աշխատում են միայն պետպատվերով բժշկական օգնություն և ծառայություն իրականացնող բուժկազմակերպությունները:

- Ստվերային դրամաշրջանառության ծավալների կրճատման, առողջապահական ծառայությունների պետական պատվերի թափանցիկության, հասցեականության և հաշվետվողականության բարձրացման, բուժհաստատությունների գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում՝ պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկված են հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որի ժամանակ պայմանագրային գումարներից ավել կատարված և չֆինանսավորված ծավալները, որպես պայմանագրային գումարի հաշվարկաման հիմք չեն ընդունվում: 2012 թվականին բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողի մեջ չի գերազանցում 1%-ի չափը: Փաստացի ցուցանիշների համաձայն այն կազմում է մինչև 1%:

- Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է Հայաստանի

Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 31-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների չափորոշիչը հաստատելու մասին թիվ 144-Ա հրամանով:

- Շտապ բժշկական օգնության ծախսերի պատշաճ ֆինանսավորման ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում շտապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալները Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեն առողջապահական ծրագրում կազմում է շուրջ 3 մլրդ ՀՀ դրամ, ինչը կազմում է ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր ծախսերի (62.5 մլրդ. ՀՀ դրամ) 4.8%-ը: Չարդարացված կանչերի ցուցանիշը 2012թ.ին կազմել է 1.36 %:

- Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության ռազմավարական դրույթի շրջանակում 2012 թվականին ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ:

- Հիգիենիկ և համաճարակային ծառայության գործունեության թափանցիկության, հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակներում հաստատվել և ներդրվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ենթակայության փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ների մանրէաբանական, սանիտարա-քիմիական, մակաբուժաբանական լաբորատորիաների և ֆիզիկական գործոնների մակարդակների չափման ժամանակ կիրառվող (թվով 39) հաշվառման ձևաթղթերը, ինչպես նաև՝ իմունականիսարգելման ոլորտի վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը:

3.4.2.Առողջապահության ոլորտում առկա հիմնախնդիրները

72. Առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը հատկապես շոշափելի են առողջապահական համակարգի կառավարման, ֆինանսավորման, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման, դեղերի և բժշկական նշանակության պարագաների շրջանառության ոլորտներում:

73. Բժշկական կազմակերպություններում ներքին կառավարման ցածր արդյունավետությունը, անբավարար թափանցիկությունը և վերահսկողության մեխանիզմների անկատարությունը, պետական պատվերի տեղադրման մեխանիզմների անկատարությունը, տրամադրված ֆինանսների ոչ միշտ նպատակային օգտագործումը ստեղծում են կոռուպցիոն դրսևորումների առաջացման նպաստավոր պայմաններ:

74. Առողջապահության ոլորտում գործող օրենսդրական դաշտի անկատարությունը ևս նպաստում է ոլորտում կոռուպցիոն երևույթների առաջացմանը: Ոլորտի հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի

գերակշիռ մասը ընդունվել է նախորդ դարի իննսունական թվականներին, մասնավորապես՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին», «Դեղերի մասին» ՀՀ օրենքները: Նշված իրավական ակտերի շատ կարգավորումներ չեն համապատասխանում ինչպես ՀՀ սահմանադրության, այնպես էլ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

75. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, գործող խմբագրությամբ, ընդունվել է 2005 թվականին, այնինչ սահմանադրությունից բխող և առողջապահության ոլորտին վերաբերող ոչ բոլոր օրենսդրական ակտերն են ընդունվել 2014 թվականի դրությամբ: Մասնավորապես, սահմանադրության հոդված 38-ի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»: Փաստացի մինչ օրս օրենքով ամրագրված չեն հիմնական բժշկական ծառայությունների ցանկն ու դրանց մատուցման կարգը:

76. ՀՀ-ում առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորման մակարդակը անբավարար է և կազմում է Համախառն ներքին արդյունքի ընդամենը 1.6%-ը՝ առաջիկա տարիներին հետագա նվազման միտումով:

77. Կոռուպցիայի դեմ պայքարի 2009-2012թթ. Ծրագրով ամրագրված էր, որ առողջապահական հիմնական ծառայությունների փաթեթն ավելի ծավալուն է պետական բյուջեի իրական հնարավորությունների համեմատ: Այդուհանդերձ, ռազմավարության գործողության ընթացքում իրավիճակը չի բարելավվել: 2014 թվականի դրությամբ նույնպես առողջապահական հիմնական ծառայությունների փաթեթի լիարժեք ֆինանսավորման պահանջվող միջոցները զգալիորեն գերազանցում են պետական բյուջեյով առողջապահական համակարգին տրամադրվող փաստացի ֆինանսավորմանը: Դրա հետևանքով բժշկական օգնության և սպասարկման գները շատ դեպքերում չեն արտահայտում իրական ծախսերը, հող են ստեղծում ոչ պաշտոնական վճարումների համար: 2013-2014 թվականների ընթացքում ներդրված պետական բյուջեի որոշ ծրագրերում՝ զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների բուժօգնություն, սոցիալական փաթեթ, սահմանված գները համապատասխանում են դրանց իրական (շուկայական) գներին, մինչդեռ բյուջեի այլ ծրագրերում, հատկապես բնակչության սոցիալապես անապահով խմբերի բուժօգնության ծրագրում, գները դեռևս անհամեմատ ցածր են իրական ծախսերից: Պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների ոչ պատշաճ հիմնավորվածությունը ազդում է նաև բուժհաստատություններում վճարովի ծառայությունների գների ձևավորման վրա:

78. Հիվանդանոցների հետ կնքվող պայմանագրերում սկսած 2000թ.-ից կիրառվում է սահմանափակ բյուջեի սկզբունքը, որն ուղղված է առաջին հերթին բուժհիմնարկներում պետության պարտքերի կուտակման և հավելագրումների գործընթացի կասեցմանը: Այդուհանդերձ, խնդիրը դեռևս պատշաճ կերպով կարգավորված չէ, ինչը համապատասխան պաշտոնյաներին հաճախ հայեցողական որոշումների կայացման հնարավորություն է ընձեռում: Լրացուցիչ պետական

Ֆինանսավորում ստանալու ակնկալիքով պետական պատվերի սահմանափակ բյուջեն արհեստականորեն հաճախ ուճացվում է, ինչը հիմք է հանդիսանում պետական պատվերի կատարողականի հավելագրումների համար: Ավելին, առողջապահության նախարարության աշխատակազմի և բուժօգնության միջև կնքվող պայմանագրում նախապես սահմանվում է տվյալ հիմնարկի տարեկան սահմանափակ բյուջեն, որից ավելի այդ բուժօգնությունը չի կարող ֆինանսավորվել նախարարության կողմից: Նման մոտեցման արդյունքում պետության կողմից երաշխավորված և բուժօգնությունների կողմից մատուցված բուժօգնության որոշ ծավալներ չեն փոխհատուցվում պետության կողմից, ինչը խաթարում է բուժօգնությունների գործունեության հաշվետվողականությունը և կոռուպցիոն ռիսկերի առաջացման համար բարենպաստ պայմաններ է ստեղծում:

79. Տարիներ շարունակ բուժօգնության որակի գնահատման չափորոշիչների բացակայությունը հանգեցնում է թերի բուժման, անփոփոխ բուժման ելքով դեպքերի, որոնց ֆինանսավորումը կատարվում է ընդհանուր սկզբունքներով: Բնակչության անբավարար իրազեկությունը հիվանդի ծախսային բեռի ավելացման լուրջ նախադրյալ է: Իր իրավունքներին, մասնավորապես պետական պատվերով բուժման ծավալներին անիրազեկ հիվանդն ավելի հաճախ է «ոչ պաշտոնական» վճարումներ կատարում:

80. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հանրապետության ամբողջ տարածքում բնակչության բոլոր խմբերի համար երաշխավորվում է արտահիվանդանոցային անհետաձգելի շտապ բուժօգնություն և հոսպիտալացում ընդհանուր բժշկական (զծային), ֆելդշերական բրիգադաների, ինչպես նաև սանիտարական ավիացիայի կանչերի միջոցով: Շտապ բժշկական օգնության մեկ կանչի համար սահմանված գինն իրատեսական չէ, ինչը հաճախ հանգեցնում է բնակչության կողմից կատարվող ոչ պաշտոնական վճարումների: Սահմանափակ բյուջեի շրջանակներից դուրս իրականացված կանչերը որոշակի ռիսկի տոկոսը (5%) գերազանցելու դեպքում պետության կողմից չեն ֆինանսավորվում, ինչը հանգեցնում է պետական միջոցների անարդյունավետ օգտագործման և ոչ պաշտոնական վճարումների, իսկ ցածր կատարողականի դեպքում՝ պայմանագրային ծավալներին համապատասխանեցնելու նպատակով մեծացնում փաստացի կանչերի հնարավոր հավելագրումների ռիսկը: Հստակ սահմանված չեն բնակչության առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց՝ անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդություններն ու վիճակները, ինչը հայեցողական որոշումների և տարամեկնաբանությունների լայն դաշտ է ստեղծում:

81. Ամբուլատոր-պոլիկլինիկական (ԱԱՊ) համակարգում սկսած 2006թ. հունվարի 1-ից բնակչության բոլոր խավերի բժշկական օգնությունը և սպասարկումն ամբողջությամբ մատուցվում է պետական պատվերի շրջանակներում: Այդուհանդերձ, ԱԱՊ օղակում առկա են բուժօգնության դիմաց ոչ պաշտոնական վճարումների ռիսկեր, հատկապես՝ որակյալ բուժօգնություն ստանալու ակնկալիքով:

82. ԱԱՊ համակարգում դիտարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացումը կարգավորող հիմնական փաստաթղթում առկա բացթողումներն ու թերությունները կոռուպցիոն ռիսկեր են պարունակում:

83. Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար ֆինանսական սահմանաքանակների հաշվարկման հիմքում ընկած է ոչ թե իրական կարիքը, այլ տարածքային սպասարկվող մեկ բնակչի հաշվով ֆիքսված չհիմնավորված արժեքը: Բժշկի նշանակումները ՀՀ հիմնական դեղերի ցանկին համապատասխանեցնելու պահանջը ցանկի ներկա պահանջներին չբավարարելու պարագայում դեղորայքի օրինական պահանջների մերժման հիմնական պատճառն է:

84. Հայաստանի Հանրապետությունում բուժժառայությունների որակի գնահատման համակողմանի ռազմավարության բացակայությունը, վերջինիս իրագործման համակարգային մեխանիզմների՝ մեթոդների, ընթացակարգերի և գործնական միջոցների բացակայությունը կոռուպցիոն ռիսկերի առաջացման պատճառ են հանդիսանում:

85. Հիվանդանոցային բժշկական ծառայությունների կլինիկական չափորոշիչների մեծ մասը ընդունված չեն, իսկ ընդունվածների գերակշիռ մասը չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, քանի որ ընդունվելուց հետո պարբերաբար չեն վերանայվում, հստակեցված չէ կլինիկական չափորոշիչների տեղը իրավական ակտերի համակարգում: Վերջիններս մեծամասամբ ընդունված են որպես անհատական իրավական ակտեր, չեն հանդիսանում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր: Որպես նորմատիվ իրավական ակտեր ընդունվում են բացառապես պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչները: Ընդհանուր առմամբ անհասկանալի է՝ առողջապահության նախարարի կամ մասնագիտական հասարակական կազմակերպությունների կողմից հաստատված կլինիկական չափորոշիչները մեթոդական փաստաթղթեր են, թե կրթական նյութեր:

86. Բացակայում են հաստատված կլինիկական չափորոշիչների շարունակական մշտադիտարկման և վերանայման կարգերը և մեխանիզմները, այդ գործընթացի պատասխանատուները, ինչի հետևանքով ընդունված կլինիկական չափորոշիչները, ընդունվելուց հետո կարճ ժամկետում կարող են դառնալ անկիրառելի:

87. Բուժօգնության որակի կլինիկական չափորոշիչների բացակայությունը խոչընդոտում է բուժօգնության որակի բարելավմանը, բժշկական սխալների նվազեցմանը, հնարավորություն չի տալիս ընտրելու կոնկրետ հիվանդության կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերականգնման լավագույն եղանակներ: Չի ապահովում բուժսպասարկողների կլինիկական գործունեության գնահատման/ինքնագնահատման գործընթացը, չի օգտագործվում բուժաշխատողների կրթության և վերապատրաստման դասընթացների ծրագրերում, չի օգնում բուժաշխատող-պացիենտ հաղորդակցության և տեղեկացված որոշումներ կայացնելուն, վիճարկային հարցերի լուծման ժամանակ հիվանդի և բժշկի իրավունքների պաշտպանությանը:

88. Կլինիկական չափորոշիչների բացակայությունը խոչընդոտում է նաև պետական բյուջեի միջոցներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների արդյունավետության գնահատմանը: Կլինիկական չափորոշիչների և որակի գնահատման մեխանիզմների բացակայությունը բերում է նրան, որ պետական պատվեր տեղադրելու ընթացքում հնարավոր չէ որակական

չափորոշիչների հիման վրա ընտրել ծառայություններ մատուցողների, ինչը պետական պատվերի տեղադրումը դարձնում է մեխանիկական գործընթաց:

89. Վճարովի բժշկական ծառայությունների դաշտը բավարար չափով կանոնակարգված չէ: ՀՀ առողջապահության նախարի հրամանով հաստատված վճարովի ծառայությունների նվազագույն և առավելագույն գները, որպես պետական պատվերի տեղադրման նախապայման, պարտադիր են միայն պետական պատվեր իրականացնող կազմակերպությունների համար: Այդուհանդերձ, բժշկական կազմակերպությունները հաճախ շրջանցում են գների ոլորտում սահմանված չափանիշները՝ դրանց խախտման համար իրական պատասխանատվության միջոցների բացակայության պատճառով:

90. Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բժշկական կազմակերպությունները հաճախ խուսափում են բժշկական ծառայությունների համար իրատեսական գներ սահմանելուց՝ հարկերից խուսափելու և ստվերային դրամաշրջանառության ծավալները չնվազեցնելու նկատառումներից ելնելով:

91. Պետության կողմից երաշխավորված գինեկոլոգիական հիվանդությունների ախտորոշման և բուժման գները իրական արժեքներից 2,5-3 անգամ են:

92. Հղիների ախտաբանության դեպքում ստացիոնար հետազոտման և բուժման գները իրական արժեքներից ավելի ցածր են:

93. Բնակչությունը պատշաճ իրազեկված չէ անվճար ծննդօգնության ու պետական պատվերի բուժման ծավալների, ցանկի և ծառայությունների վերաբերյալ:

94. Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում բացակայում են վճարովի բժշկական ծառայությունների գները ու գնագոյացման միասնական կարգը:

95. Ախտորոշման և բուժման իրական արժեքներով գների սահմանմամբ ապահովագրական բժշկության զարգացման անբավարար մակարդակը և մոտակա հեռանկարում դրա ներդրման ծրագրերի բացակայությունը ևս առողջապահության ոլորտում կոռուպցայի դեմ պայքարի համար խոչընդոտներ են ստեղծում:

96. Մոր և մանկան առողջության ոլորտում բուժաշխատողների ոչ բավարար վարձատրությունը կոռուպցիոն երևույթների առաջացման իրական վտանգ են ստեղծում:

97. Երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի շրջանակներում 2011թ. տեղի ունեցավ մանկաբուժական դեպքերի բուժման գների գրեթե կրկնակի բարձրացում, ինչը հնարավորություն տվեց բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձը և զգալի կրճատել ստվերային վճարումների գործելակարգը, իսկ հաշմանդամ երեխաների բուժմամբ զբաղվող մասնագիտական ծառայությունների (մանկական ռեաբիլիտոլոգիա, հեմատոլոգիա, օնկոլոգիա, հոգեբուժություն) բուժման գները մնացին անփոփոխ: Այս ամենը խոչընդոտում է հաշմանդամների բուժօգնության մատչելիության և որակի բարելավմանը, առաջացնում է հիվանդների և բուժանձնակազմի դժգոհությունը, քանի որ աճող ծանրաբեռնվածության պայմաններում բուժանձնակազմի աշխատավարձը մնում է ցածր, ինչը անխուսափելիորեն հղի է կոռուպցիոն ռիսկերով և ծնում է ոչ պաշտոնական վճարումների գործելակերպ:

98. Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցում բուժվող հիվանդներին հաճախ առաջարկվում է կատարել լրացուցիչ վճարումներ՝ այս կամ այն պարագայի, հետազոտության և այլնի համար, կամ առաջարկվում է կատարել պետական պատվերի շրջանակներում չընդգրկված հետազոտություններ, ինչը պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների ոչ բավարար կարգավորվածության և այս ոլորտում պատասխանատվության միջոցների անբավարարության հետևանք է:

99. Լաբորատոր ծառայությունների մատուցման տեսանկյունից՝ ոչ հավաստի տվյալների ախտորոշման վերաբերյալ որակի հսկողության բացակայության պայմաններում հնարավոր է ոչ ճշգրիտ հետազոտության արդյունքների ստացում. մարդը կարող է իրականում հիվանդ չլինել, բայց նրա մոտ ախտորոշվի որևէ հիվանդություն կամ հակառակը: Բացակայում են լաբորատորիաների համար սահմանված ստանդարտները. լաբորատորիաներն աշխատում են իրենց կողմից ձեռք բերված կամ մշակված մեթոդաբանությամբ, որի արդյունքները և որակը վստահելի չեն, արժեքը հիմնավորված չէ: Ոչ ստանդարտացված մեթոդների կիրառումը հանգեցնում է լրացուցիչ ծախսերի: Կարող են ստացվել լաբորատոր հետազոտությունների, փորձաքննությունների ոչ ճիշտ եզրակացություններ և արդյունքներ, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

100. 2009-2012թթ. ՀՌԻՄԾ-ով նախատեսվել էր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում պարտադիր ստեղծել պաշտոնական ինտերնետ կայքեր: Պաշտոնական կայքերի պարտադիր նվազագույն պահանջները՝ համապատասխան տեղեկատվության մշտական թարմացումներով (հերթագրման գործընթացի, հիվանդների շարժի և թարմացվող այլ ցուցանիշների վերաբերյալ) սահմանվել են առողջապահության նախարարի հրամանով: Նմանատիպ տեղեկատվության առկայությունը պետք է ապահովի հիմնարկի գործունեության թափանցիկությունն ու վերահսկելիությունը, բժշկական կազմակերպությունները կայքերի միջոցով պետք է հանրությանը տրամադրեն անհրաժեշտ տեղեկատվություն իրենց իրավունքների, բժշկական ծառայությունների, գնացուցակի և այլնի վերաբերյալ: Այդուհանդերձ, կատարված դիտարկումները վկայում են, որ բժշկական կազմակերպությունների միայն 10-15%-ը ունեն նշված բոլոր պահանջներին բավարարող ինտերնետային կայքեր:

101. Դեղագործական ոլորտում կոռուպցիոն ռիսկերը առկա են դեղերի շրջանառության տարբեր օղակներում՝ դեղերի գրանցում, դեղերի շրջանառություն, դեղերի գնումների գործընթաց: Մաքսագերծ ճանապարհով դեղերի ներմուծումը հարևան երկրներից և չգրանցված դեղերի շրջանառությունը նույնպես կոռուպցիոն երևույթների առաջացման պատճառ են հանդիսանում: Ոլորտում առկա հիմնախնդիրներից է դեղերի գրանցման թափանցիկության ցածր մակարդակը, որը բարձրացնելու ուղղությամբ անհրաժեշտություն է առաջանում ներդնել դեղերի գրանցման մեկ պատուհանի սկզբունքը: Հարկավոր է նաև միջոցներ ձեռնարկել դեղերի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը հաստատելու ուղղությամբ: Թեև հատուկ նշանակության դեղերի գնումները և բաշխումն իրականացվում են կենտրոնացված կարգով, այդուհանդերձ, սահմանված կենտրոնացված գնումներով ձեռք բերվող դեղերի պահանջարկի որոշման սկզբունքներն ու կարգը վերանայման կարիք ունեն: Սահմանված կարգի համաձայն՝

կենտրոնացված կարգով դեղերի պահանջարկը որոշում են ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ոլորտների գլխավոր մասնագետները: Քանի որ գլխավոր մասնագետները չեն հանդիսանում հանրային ծառայողներ, չեն հանդիսանում նախարարության աշխատողներ, հետևաբար չունեն նաև պատասխանատվություն դեղերի ընտրության, դրանց տեսականու կամ քանակների պատշաճ ընտրության համար:

102. Դեղերի կենտրոնացված գնումների համակարգը բավարար չափով թափանցիկ չէ: Թերի է նաև մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից դեղերի մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման հանդեպ պատշաճ վերահսկողության համակարգը:

103. Հիմնական դեղերի ցանկի վերանայման պարբերականությունը կարգավորված չէ և իրականացվում է հայեցողական սկզբունքով: Մարդասիրական օգնության խողովակներով ստացված դեղերի վերաբաշխման մեխանիզմները հստակ չեն:

104. Դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների ստացման, պահպանման, հաշվառման և բաշխման կարգի անկատարությունն անհնարին է դարձնում դեղորայքի շարժի լիարժեք վերահսկումը: Հիվանդանոցներում բժիշկների կողմից հիվանդներին նշանակված դեղորայքի 26%-ը ձեռք են բերվում հիվանդների կողմից՝ նույնիսկ հիվանդանոցում այդ դեղերի առկայության պարագայում: Պետական պատվերի շրջանակներում բուժում ստացող հիվանդները, բացառությամբ առաջին անհրաժեշտության դեղերի, բժիշկների կողմից նշանակված մնացած դեղերը ձեռք են բերում ինքնուրույն:

105. Հիվանդանոցներում առկա է պիտանելիության ժամկետը լրացած դեղերը և բժշկական պարագաները հիվանդների վրա դուրս գրելու հնարավորություն: Ներհիվանդանոցային դեղաշրջանառության մեխանիզմի անկատարության արդյունքում, դեղորայքային բուժման տեխնոլոգիական խախտումները, հաճախ դրսևորվում են բժշկի կողմից ներկայացված դեղորայքի չտրամադրման, ավելի կամ պակաս տրամադրման դեպքերով:

106. Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացը անկատար է նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում: Պետական պատվերի շրջանակներում ստացված դեղերը ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից բաշխվում են հայեցողական եղանակով: Նշված հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորման բացակայության պատճառով, նույն հիվանդությամբ տառապող հիվանդը կարող է սուբյեկտիվ պատճառներով ստանալ ավելի մեծ քանակով դեղ, իսկ մեկ այլ հիվանդ չստանալ տվյալ դեղը կամ ստանալ պահանջարկից քիչ քանակով:

107. Բժշկական պարագաների և բժշկական նշանակության ապրանքների որակի ստանդարտները սահմանված չեն, իրավական ակտերով կանոնակարգված չէ նաև բժշկական սարքավորումների անվտանգության և շահագործմանը ներկայացվող պահանջները, ինչը հնարավորություն է տալիս իրացնել և շրջանառել ոչ պատշաճ որակի բժշկական նշանակության ապրանքներ և բժշկական պարագաներ և խոչընդոտներ է ստեղծում գործող գնումների ընթացակարգերին համապատասխան որակյալ ապրանքներ գնելու համար:

108. Նախորդ տասնամյակում իրականացված բժշկական կազմակերպությունների օպտիմալացման /արդիականացման/ և մասնավորեցման գործընթացները չեն վերլուծվել՝ դրանց արդյունավետությունը գնահատելու նպատակով: Ելնելով վերոգրյալից՝ ներկայումս պլանավորվող ցանկացած բժշկական կազմակերպությունների օպտիմալացման /արդիականացման/ և մասնավորեցման գործընթաց կարող է կոռուպցիոն ռիսկեր պարունակել: Ավելին, որոշ դեպքերում կառավարության որոշումներով ամրագրված օպտիմալացման գործընթացը ամբողջությամբ կամ մասնակի չի իրականացվել և նշված կառավարության որոշումների մեջ փոփոխություններ չեն կատարվել:

109. Պետական մասնակցությամբ բժշկական կազմակերպությունները գործում են հարյուր տոկոս պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերությունների կարգավիճակով և փաստացի շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություններ են: Առևտրային կազմակերպությունների կարգավիճակը չի արտացոլում դրանց ստեղծման հիմնական նպատակը: Պետությունը պետական բժշկական հաստատությունները ստեղծել է ոչ թե շահույթ ստանալու, այլ պետական առողջապահական ծրագրեր իրականացնելու նպատակով:

110. Պետական բժշկական հաստատությունները, գործելով փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակով, գերակշիռ դեպքերում գործում են տնօրենի միանձնյա կառավարման ներքո: Ելնելով վերոգրյալից, ելնելով տնօրենի անձնական հատկություններից և կառավարման հմտություններից՝ բժշկական հաստատությունը գործում է արդյունավետ կամ անարդյունավետ: Զարգացած երկրներում գործող բժշկական հաստատությունների կոլեգիալ կառավարման մեխանիզմները ՀՀ-ում ներդրված չեն:

111. Բժշկական կազմակերպությունների կառավարման ապակենտրոնացման ծրագրերի շրջանակներում գյուղական բնակավայրերում գտնվող որոշ բժշկական հաստատությունների բաժնետոմսերը փոխանցվել են համապատասխան գյուղական համայնքներին: Այդուհանդերձ, հանձնելու պահից որևէ վերլուծություն չի կատարվել նշված բժշկական հաստատությունների համայնքային ենթակայությանը հանձնելու արդյունավետության վերաբերյալ:

112. Բժշկական հաստատություններում կադրերի ընտրության մրցութային կարգը դեռևս պատշաճ ձևով չի գործում, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում կադրերի հայեցողական ընտրության և հովանավորչության համար:

113. Բժշկական անձնակազմի օպտիմալ թվաքանակի հաշվարկման համար անհրաժեշտ մեթոդաբանության ու նորմատիվների բացակայության խնդիրը իր լուծումը չի ստացել, որի պատճառով հաստիքային ցուցակների ուղեկցվածությունը և պետական լիազոր մարմնի կողմից հաստիքանախահաշվային կարգապահության նկատմամբ անբավարար վերահսկողությունը լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր են ստեղծում: Բուժանձնակազմի պաշտոնական ցածր աշխատավարձերն էականորեն նպաստում են ոչ պաշտոնական վճարումների երևույթի արմատավորմանը:

114. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները ընդունվել են նախորդ տասնամյակի ընթացքում: Թեև սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի մի մասը արդիական է, դրանց մյուս մասը ընդունվել է նախկին խորհրդային սանիտարական

կանոնների և հիգիենիկ նորմերի հիման վրա, ծավալուն են, ծանրաբեռնված են անհարկի և խիստ պահանջներով և կարիք ունեն արդիականացման:

115. Բժշկական գաղտնիքի պահպանման մեխանիզմների բացակայությունը առողջապահության ոլորտում մարդու իրավունքների պահպանության և կոռուպցիոն ռիսկերի առաջացման պատճառ է հանդիսանում:

3.4.3. Առողջապահության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները

116. Առողջապահության ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու հետևյալ միջոցառումները.

- Մշակել և ներդնել հիվանդությունների կանխարգելման, առողջ ապրելակերպի խրախուսմանն ուղղված համալիր ծրագիր, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հիմնականում առաջնային և հիվանդանոցային ոլորտներում բուժական ծրագրերի իրականացմանը ուղղվող գումարներից հիվանդությունների կանխարգելմանն ու առողջ ապրելակերպի արմատավորմանը ուղղվա ծրագրերին նպատակաուղղելու ուղղությամբ:

- Մշակել և իրականացնել առողջապահական օրենսդրության արդիականացմանը ուղղված համապարփակ ծրագիր՝ գործող իրավական ակտերը համապատասխանելիցնելով ՀՀ սահմանադրությանը և արդի պահանջներին, մշակել և հաստատել ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածից բխող օրենսդրական ակտեր:

- Վերանայել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման մեխանիզմները: Համապատասխանեցնել պետական պատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ցանկը՝ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներին՝ ապահովելով օրենսդրությամբ ամրագրված անվճար դեղապահովման մարդու իրավունքները:

- Առողջապահական հիմնական ծառայությունների փաթեթն համապատասխանեցնել պետական բյուջեի իրական ծախսերին:

- Իրականացնել համալիր ծրագիր՝ առողջապահության ոլորտում գործող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները իրատեսական դարձնելու, ծառայությունների գները կանոնակարգելու, վերահսկելու, ծառայությունների գների անհիմն բարձրացումները և ցածրացումները կանխարգելելու մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ: Պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական ծառայությունների գները համապատասխանեցնել իրական ծախսերին:

- Համագործակցելով ֆինանսների նախարարության հետ՝ կանոնակարգել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնագոյացման

համակարգը: Ստեղծել գործուն մեխանիզմներ առողջապահության ոլորտում մատուցվող ծառայությունների գնագոյացման և գների վերահսկողության իրականացնելու համար: Երաշխավորել ՀՀ-ում գործող բուժօժանայությունների համար ողջամիտ գների առկայությունը: Բացառել ստվերային շրջանառությանը նպաստող և շուկայական գներից ցածր գների սահմանումը բժշկական կազմակերպությունների կողմից:

- Իրականացնել հիվանդների /պացիենտների/ իրավունքների իրազեկման պարբերական ծրագրեր, բարելավել բնակչության իրազեկվածությունը առողջապահության ոլորտում իրենց իրավունքների վերաբերյալ, մասնավորապես պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների, դրանց մատուցման կարգի, այս ոլորտում քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման ծրագրերի վերաբերյալ: Ներդնել բժշկական կազմակերպությունների գործունեության թափանցիկության ապահովման, բնակչությանը վերջիններիս կողմից իրազեկման լրացուցիչ մեխանիզմներ:

- Մշակել և ներդնել լաբորատոր գործիքային ծառայությունների որակի ապահովման և վերահսկման չափորոշիչներ և դրանց նկատմամբ վերահսկողության գործուն համակարգեր:

- Վերանայել դեղերի պետական գրանցման գործող կարգը, պետական գրանցման գործընթացը դարձնել թափանցիկ և կառավարել՝ էլեկտրոնային կռավարման մեխանիզմների ներդրման և կանոնակարգող դաշտի կատարելագործման միջոցով:

- Վերանայել և կառավարության որոշմամբ հաստատել պետական պատվերի շրջանակներում դեղերի պահանջարկը որոշելու մեխանիզմները:

- Բարելավել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը՝ ապահովելով ստացված դեղերի արդյունավետ և արդարացի բաշխումը:

- Օրենսդրորեն կանոնակարգել բժշկական նշանակության ապրանքների և բժշկական պարագաների, բժշկական սարքավորումների որակին և անվտանգությանը ներկայացվող պահանջները: Սահմանել պատշաճ հսկողություն նշված արտադրանքի անվտանգության և որակի նկատմամբ:

- Գնահատել բժշկական կազմակերպությունների օպտիմալացման /արդիականացման/ նախկին ընթացակարգերը: Բժշկական կազմակերպությունների օպտիմալացման /արդիականացման/ ծրագրերը այսուհետ իրականացնել բացառապես մանրակրկիտ կերպով մշակված և միջազգային փորձագետների կողմից հավանության արժանացած ծրագրերի հիման վրա:

- Վերանայել պետական և համայնքային մասնակցությամբ բժշկական կազմակերպությունների կազմակերպական իրավական տեսակները:

- Արդիականացնել բժշկական կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարներին ներկայացվող պահանջները, բարձրացնել վերջիններիս գործունեության թափանցիկությունը, արդյունավետությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև խստացնել գործադիր մարմնի ղեկավարի պարասխանատվությունը բժշկական կազմակերպության արդյունավետ կառավարման հարցում:

- Բժշկական կազմակերպություններում ապահովել արդյունավետ և թափանցիկ կադային քաղաքականությունը իրականացումը: Սեղմ ժամկետներում մշակել և հաստատել բժշկական կազմակերպությունների անձնակազմի օպտիմալ թվաքանակի նորմատիվները և բացառել պետական պատվերի տեղադրումը նշված չափանիշներին չհամապատասխանող կազմակերպություններում: Ապահովել առողջապահության ոլորտում կադրերի մրցույթային ընտրության մեխանիզմների իրական կիրառումը: Սահմանել յուրաքանչյուր բժշկական պաշտոնի համար միասնական տիպային պահանջների սահմանումը և բուժաշխատողների զբաղեցրած պաշտոններին համապատասխանությունը: Ապահովել պետական մասնակցությամբ բժշկական հաստատություններում հաստիքացուցակների հաստատման գործընթացի նկատմամբ վերահսկողություն:

- Իրականացնել սանիտարական կանոնների, հիգիենիկ նորմերի վերանայման և արդիականացման համալիր ծրագիր:

- Բարելավել առողջապահության համակարգում գնագոյացման համակարգը և վերացնել ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանները. բժշկագիտական և տնտեսագիտական չափորոշիչներ մշակելու և ներդնելու, ծառայությունների ծախսատարության, ինքնարժեքի վրա հիմնված իրատեսական բուժօգնության գներ սահմանելու, վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների պետական կարգավորման մեխանիզմներն օրենսդրորեն կարգավորելու, պետական բժշկական հաստատություններում գործող վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակները պետական լիազոր մարմնի կողմից յուրաքանչյուր տարի քննարկելու և հաստատելու, բուժհաստատություններում հիմնադրի կողմից գնագոյացման և վճարովի գործունեության արդյունքում գոյացած հասույթի բաշխման մեխանիզմները ներդնելու, պետական լիազոր մարմնի կողմից բուժհաստատությունների վերահսկողությունը ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ խստացնելու, ֆինանսական փոխհատուցման համավճարային համակարգի ներդրումը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերի և պետության կողմից նախատեսվող ծախսերի տարբերությամբ հիմնավորելու, բնակչության և բուժաշխատողների շրջանում համավճարային սկզբունքի վերաբերյալ համակողմանի և ընդգրկուն քարոզչական և կրթալուսավորչական աշխատանքներ իրականացնելու միջոցով:

- Վերանայել բժշկական հաստատությունների հետ կնքվող պայմանագրերում սահմանափակ բյուջեի սկզբունքը, առաջարկել նշված ինստիտուտին փոխարինող ավելի արդյունավետ մեխանիզմներ, որոնք թույլ կտան հնարավորինս հաշվի

առնելով հիվանդի շահերը՝ պետական պատվերի գումարները ուղղել հիվանդին փաստացի ծառայություն մատուցող բուժհաստատությանը՝ առանց արհեստական սահմանափակումների:

- Բժշկական օգնության և սպասարկման որակի վերահսկման և բուժծառայությունների անվտանգության ապահովման նպատակով օրենքով կանոնակարգել բժշկական օգնության և սպասարկման կլինիկական չափորոշիչների իրավական վիճակը:

- Մշակել և իրականացնել կլինիկական չափորոշիչների մշակման և ներդրման համալիր ծրագիր՝ սահմանելով չափորոշիչների մշակման և պարբերական վերանայման համար պատասխանատու կառույցներ:

- Կրճատել առողջապահության ոլորտում ստվերային դրամաշրջանառության ծավալները, բարձրացնել պետական պատվերի թափանցիկությունը, հասցեականությունը և հաշվետվողականությունը, բուժհաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը. պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող ֆինանսավորման աճի շարունակական ապահովման պայմաններում պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների շրջանակը հստակեցնելու և ՀԾՓ-ն պարբերաբար վերանայելու և փոփոխելու, բնակչության զգալի հատվածն ընդգրկող սոցիալական պաշտպանության հասցեագրված համակարգի՝ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը հաջորդականորեն ներդնելու, պետական պատվերի պայմանագրային ծավալների հիմնավորվածությունն ապահովելու, նախքան պետական պատվերի պայմանագրերի կնքումը նախորդ տարիների կատարողականները և դրանց ծավալների հնարավոր մեծացման միտումները մանրակրկիտ վերլուծելու, պետական լիազոր մարմնի կողմից պետական պատվերի պայմանագրերի կնքման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը խստացնելու և պետական պատվերի հնարավոր հավելագրումներն ու բուժհաստատությունների վնասաբեր գործունեությունը կանխելու, անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը հստակեցնելու, ցանկի թափանցիկությունը և հնարավոր պարզությունն ապահովելու, ՀՀ առողջապահության համակարգում տվյալների միասնական բազա ստեղծելու, բուժհաստատություններում բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգեր ներդնելու, յուրաքանչյուր բուժհաստատության պաշտոնական կայքում հաստատված ցանկով պարտադիր տեղեկատվություններ տեղադրելու միջոցով:

- Ապահովել հիվանդների իրավունքների լիարժեք իրականացումը. հիվանդների և բուժաշխատողների իրավունքների ու պարտականությունների օրնսդրական ամրագրումը հստակեցնելու, այդ իրավունքների իրականացման գործուն մեխանիզմներ ներդնելու, դրանց խախտման դեպքում բողոքարկումների ընթացակարգեր ներդնելու, պացիենտների իրազեկման հասցեական մեխանիզմներ, պետական պատվերով հիվանդանոցային բուժում ստացող

հիվանդին իր իրավունքների և բուժօգնության ծավալների մասին ընդունարանից սկսած իրազեկելու միջոցով:

- Կրճատել դեղերի սովերային շրջանառությունը և բարձրացնել դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողության արդյունավետությունը. դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողությունը օրենսդրորեն կարգավորելու, դեղաշրջանառության վերահսկման, այդ թվում՝ մոնիթորինգի և տվյալների հավաքագրման ու վերլուծության, մասնագիտացված կառույց ստեղծելու, դրա գործունեության համար անհրաժեշտ ընթացակարգեր ներդնելու և ինստիտուցիոնալ կարողություններ ապահովելու, դեղագործական գործունեության լիցենզավորման համակարգի շարունակական կատարելագործման, պետական ծրագրերի շրջանակներում դեղերի պահանջարկի գնահատման համակարգ ներդնելու, որակի ստանդարտներին չհամապատասխանող և կեղծված դեղերի արտադրությունը և տարածումը կանխելու, դեղերի որակին և հիվանդի առողջությանը սպառնացող մասնագիտական խախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանելու, լաբորատոր, կլինիկական գործունեության, արտադրական, մատակարարման և դեղատնային գործունեության նկատմամբ նվազագույն պահանջներ և դրանց կատարման նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու միջոցով:

- Ապահովել դեղորայքի պետական գնումների և բաշխման կենտրոնացված գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը. դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը առողջապահության ոլորտի պետական բյուջեի հատկացումներում էականորեն մեծացնելու, դեղերի գնումների գործընթացի կարգավորումը հստակեցնելու, հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի գների շարունակական դիտարկման և ապրանքային շուկաներում մրցակացության պաշտպանության, դեղերի կենտրոնացված պետական գնումների գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու, դեղերի կենտրոնացված գնումների մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու միջոցով:

- Ապահովել ամբուլատոր պոլիկլինիկաներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը. Հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի համար պետության կողմից փոխհատուցման համակարգի կարգավորումը հստակեցնելու և ընթացակարգեր ներդնելու, առողջապահության մասնագետների և հիվանդների համար դեղերի էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր ստեղծելու միջոցով:

- Ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը. դեղաբուժության օպտիմալ սխեմաներ և դրանց կիրառման նկատմամբ մասնագիտական վերահսկողություն սահմանելու, հիվանդանոցային բուժհաստատություններում ծախսային

առաջնահերթությունների պահպանման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, հիվանդանոցային բուժհաստատություններում դեղորայքի չտրամադրման դեպքում պայմանագրային հիմունքներով սահմանված ֆինանսական պատժամիջոցները վերանայելու, վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ դեղորայքային ծախսերի պարտադիր ներառում և դրա նկատմամբ վերահսկողություն սահմանելու, հիվանդանոցային դեղաթերապևտիկ կոմիտեների գործունեության ընթացակարգերի հստակեցման, դրանց գործունեության հանդեպ արտաքին վերահսկողություն սահմանելու միջոցով:

- Բարձրացնել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշակական հաստատությունների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը. հիվանդներին պոլիկլինիկաներից ստացիոնար բուժհաստատություններ անհարկի ուղեգրումների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, բուժհաստատություններում իրականացվող հետազոտությունների համար գնվող ռեակտիվների, ժապավենների և այլ պարագաների ծավալների նկատմամբ պատշաճ վերահսկողություն սահմանելու, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական սահմանաքանակների հաշվարկման և դեղորայքի բաշխման ընթացակարգերը հստակեցնելու, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացումը պայմանագրային սկզբունքով աշխատող լիցենզավորված դեղատների միջոցով իրականացնելու, առողջության առաջնային պահպանման մակարդակում բուժօգնության որակի կառավարման և բարելավման մեթոդներ սահմանելու, ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ ներդնելու, որակի բարելավման գործընթացի և արդյունքների շարունակական ստուգազննման և մոնիթորինգի մեխանիզմներ ներդնելու, ԱԱՊ համակարգում ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձի հաշվարկումը մատուցած ծառայությունների որակի և բուժման արդյունքի գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ու խրախուսական վարձատրության համակարգերի հետ կապելու, բժշկական ծառայությունների իրական ինքնարժեքի հիման վրա բուժծառայությունների իրատեսական գներ սահմանելու միջոցով:

- Բարձրացնել առողջապահական պետական տեսչության գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը. առողջապահության ոլորտում պետական վերահսկողության ծավալների կրճատման, տնտեսվարող սուբյեկտներում ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման, հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտների ակրեդիտացման համակարգ ներդնելու, հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներում աշխատողների անձնական սանիտարական գրքույկների առկայության և պատշաճ մակարդակով բժշկական զննությունների կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը խստացնելու և վերահսկողական գործառույթների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը երաշխավորող ընթացակարգեր սահմանելու միջոցով: